Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

**Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

**О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

LIBRARIES OFFSITE
CU60547499
BX127 .O8
Eresunuirek taru mij

COLUMBIA UNIVERSITY
THE LIBRARIES
IN THE CITY OF NEW YORK
GENERAL LIBRARY

Digitized by Google

# ԵՐԵՍՈՒՆՈՒԻՐԵՔ ՏԱՐՈՒ

# ՄԻՋՈՑ

## ՆԵՐԿԱՅՍ՝ ԱՆՑԵԱԼԻՆ ԾՆՈՒՆԴԻՆ Է

ԵՒ

## ԱՊԱԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ.

ԿԱՄ

## ԱԶԳԻՍ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՅՕՐԻՆԵԱՑ Յ. ՈՍԿԱՆ

ՏԵՏՐ Ա.




Ի Կ. ՊՈԼԻՍ Ի ՂԱԼԱԹԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ
— 1861 —

Digitized by Google

Digitized by Google

# ԵՐԵՍՈՒՆՈՒԻՐԵՔ ՏԱՐՈՒ ՄԻՋՈՑ

## ՆԵՐԿԱՅՍ՝ ԱՆՑԵԱԼԻՆ ԾՆՈՒՆԴՆ Է
## ԵՒ
## ԱՊԱԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

ԱԶԳԻՍ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՅՕՐԻՆԵԱՑ Յ. ՈՍԿԱՆ

Ի Կ. ՊՕԼԻՍ Ի ՂԱԼԱԹԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ
— 1861 —

Digitized by Google

8, 10, 13, 14, 15, 21, 22,
23, 24, 25, 27, 31, 36,
38, 40, 41, 42, 44, 45,
45 seq.

BX
127
.09

Digitized by Google

# ԱԶԳԻՍ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ
# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ.

## ՄԱՍՆ Ա.

### ԲԱՆ ԱՌ ԿՂԵՐՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ

*Եթէ վշտանայ ինչ մի անդամ՝ վշտանան ամենայն անդամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի անդամ՝ խնդան ամենայն անդամքն ընդ նմա։*

Բ. Կորն. ԺԲ. 26.

Տեարք իմ,

Ամենակարող ձեռք մը կայ երկինքը որ աստղերաց երասանակը կը բռնէ. չիկայ և ոչ ինչ որ կրնայ ստամբակիլ և ելանել անոր ցուցուցած ուղղութենէն և կարգէն. խոտի շիւղ մը և արեւը, ջրոյ կաթիլ մը և Ովկիանոսը, օրանի մանուկ մը և գունտիս էն մեծ թագաւորը։ Անզուգական է անոր իշխանութիւնը այն ամեն բաներուն մէջ՝ որ մեր զգայարանաց իբրև կանոնաւոր կը ներկայանան. և անճառելի անոնց մէջ՝ որ անկանոն կը թուին մեզ. քանի որ իրեն համար չիք ինչ որ անկանոն ըլլայ։ Ինքն է որ, 'ի տարապայման ժամու՝ 'ի տոսկունն մեղապարտ մահկանացուաց, կը

Digitized by Google

ջերմնէ հուր և մրրիկ. և անոնցմով կը մաքրէ օդն ու ջուրերը 'ի պղծութենէ, հակառակութեամբ տարերաց. Նոյնպէս ինքն է, որ յանկարծ կը տապալէ տկար մարդկութեանս խորհուրդները՝ որպէս զի զանի սրբէ և մղէ դէպ 'ի կատարելութիւն, հակառակութեամբ գաղափարաց: Օձը՝ իրեն խորամանկութեամբը ու երկայրի լեզուովը, և աղաւնին՝ իր հեզութեամբն ու քաղցրիկ մնչելովը՝ կրնան ըլլալ մեզի համար առաջինը՝ տրամութենէ ետքը ուրախութիւն, և երկրորդը՝ ուրախութենէ ետքը տրամութիւն, ըստ որում՝ օգուտ քաղենք իմաստութեամբ այն զկծեցուցիչ պատահաներէն, կամ անմտաբար ոչինչ օգտինք այն քաղցր խրատներէն՝ զորս կը մատակարարէ մեզ այդ տիեզերաշէն Աջը՝ որուն սուրը ժամանակն է, և որուն հովանին Նախախնամութիւն:

Ու՝ երբ արդեօք աւելի սաստեց և խրատեց նա զմեզ քան թէ այժմ: Հաւասիկ կը տեսնեմ զձեզ, Հայք իմ, որ 'ի սուգ համակեալ էք. 'ի ժամանակի՝ յորում յայտնի այցելութիւն կընէ մեզ Տէր. զի քանի որ ազգս միացեալ է՝ դուք որ իբրև բարոյական անդամք՝ անոր գլուխը կը կազմէք, ուրախ չէք կրնար ըլլալ. և քանի որ դուք վիրաւորեալ էք՝ ազգը իբրև մարմին չի կրնար փառաւորեալ ըլլալ. վասն զի փոխադարձ պաքտաւո-

րութեամբք և փոխադարձ կապակցութեամբք դուք և ազգը մի էք և ոչ երկու ։ Եւ որովհետեւ բարոյական զուգութիւնն է բարեաց մայրը՝ անզուգութիւնն եղաւ, է, և պիտի ըլլայ ծնող ամենայն չարեաց՝ եթէ աչուընիս գոցենք բանականութեան լուսոյն, դէմ որ անցեալը և ներկայն մեր մտացը առջին պարզելով ապառնիին աղիողորմ տեսիլը մեզի կը ներկայացնէ ։ Այո, անզուգութիւննիս պիտի ըլլայ մայր ամենայն ապագայ չարեաց՝ եթէ ականջնիս խցենք այդ Երկնային ձայնին՝ որ գոգցես մեր խղճին մէջէն մեզի կաղաղակէ. « Ահա հազիւ երեսուն և երեք տարի, յորս ես զքեզ բազում խրատեցի, ո՛ ազգդ Հայոց, և այս երրորդ անգամն է որ կը յանդիմանեմ. եթէ դարձեալ չի լսես՝ աչքս պիտի գոցնեմ այն փոքր վրայէն՝ զոր ես ՚ի շնորհս սրբոցն խնամ կառուցի, զորս դու երբեմն նախատեցիր և հալածեցիր. բայց ես ՚ի սէր նոցա՝ առաքելութեան մէջ անգամ մը սփռեցի զքեզ ՚ի քաւութիւն, այդ բարոյական տունք անխափան պահել կամեցայ. բայց այս քանի՛ անգամն է որ պաշտօնեայքդ զանի երկպառակեցին. և դու անհոգ կեցար ։ Եւ այս պիտի ըլլայ եթէ կամք չունենաս լսել վկայութեանս՝ զոր ես ահա քու խղճէդ քեզի կու տամ»։

Գուցէ ձեզմէ ոմանց ականջը անախորժ հնչէ ձայնս, Տեարք իմ հոգեւորք. բայց իրաւ

Digitized by Google

Կ՚ըսեմ ձեզի, որ եթէ ես ըլլայի ձեզի հետ խօսողը՝ հարկ էր որ գործածէի այն ձեւերը որ քաղաքականութիւնը ձեր աստիճանին յատկացուցած է ; և առ սովորութեան՝ քաղաքավարութեան պարտք մը համարուած . բայց հանդուրժեցէք թերութեանս՝ և ներեցէք որ անպատրուակ խօսիմ ձեզի ստիպողական ժամանակիս մէջ, յանուն Ճշմարտութեանն՝ ուրում դուք էք պաշտօնեայ, զոր ես պաշտեմ 'ի ձեզ, որով և եմս քրիստոնեայ :

---

Ամեն իշխանութիւն որ ժողովրդեան ազատ հաճութեամբը անոր երջանկութեանը վրայ հիմնեալ է յԱստուծոյ է . այս է " ձայն բազմաց ձայն Աստուծոյ ": Այս է ա՛յն պայմանիս վրայ պէտք է հիմնեալ ըլլան ամենայն օրէնք որով մարդկային իշխանութիւն մը կը վաւերանայ և կ՚աւանդուի՝ կամ անհատի մը ձեռքը և անոր յաջորդութեանը՝ բացարձակապէս . կամ անհատի մը՝ և անոր յաջորդութեան պահերեցութեանը ենթադրեալ ժողովի մը . և կամ հաւասարազօր անդամոց ժողովի մը՝ միայն նախագահութեամբ : Ահա այսպէս է որ և է Գերագոյն իշխանութիւն :

Այլ և է Պետութեան առաջին վայելչութիւնն է Ազատութիւն . իշխանութեան բարոյական մասը՝ որ ուղղակի պէտք է ներգոր-

ծէ առ հասարակ ժողովրդեան վրայ. եւ Երկ-րորդը Արդարութիւն. իշխանութեան գատաւորական մասը՝ որ պէտք է ներգործէ ըստ արժանւոյն բարեաց և չարեաց վրայ: Եւ որպէս զի Պետութիւն մը Աստուծմէ այս իրեն տըրուած իշխանութիւնը կարենայ ազատապէս վարել յօգուտ մարդկութեան՝ օրէնքը այս պայմանաւ միայն դատաւորին ձեռքը կուտայ սուր. այս է իշխանութիւն պատժելոյ:

Այժմ, ժողովրդոց կարեացը բաւելու համար Գերագոյն իշխանութիւնը իրեն օժանդակներ կը կարգէ, և կուտայ իր իշխանութեանը մէկ մասին տնօրէնութիւնը այնչափ անձանց՝ որչափ որ պէտք կայ աւագագոյնէն դէպ 'ի ստորագոյնը. իբրև այլ և այլ մեծ և փոքր աղբերք՝ մի և նոյն աւազանէ: Արդ որ և է վերին կամ ստորին իշխանութիւն երբ օրինաց համեմատ վարուի՝ արդար է. երբ օրէնքը առ կրից կամ փառասիրութեան չեղէ իբրև թէ իր աստիճանին արտօնութեամբք անպատժութեանը վստահանալով՝ անոր մեծ վայելչութեանը դէմ կը մեղանչէ արդարութիւնը խափանելովը. ապօրինաւոր է. իսկ երբ յայտնի օրինաց դէմ մաքառի՝ բռնաւոր է. և յօրինաց անտի առնու զդատապարտութիւն:

Ըստ բերման ժամանակի և պիտոյից, յօգուտ հասարակութեան, օրինաց մէջէն մէկ կամ աւելի յօդուածներ փոփոխելու կամ պակ-

Digitized by Google

աճցնելու համար ու ելցնելու կարողութիւնը Գերագոյն իշխանութեան սեպհականութիւնն է։

Այս Գերագոյն իշխանութեան ստորակարգեալ ճիւղերէն մէկն է Տաճկաստանի մէջ տիրող կրօնքէն դուրս հպատակ ազգերու շնորհուած Պատրիարքութիւն կամ Ազգապետութիւնը․ որով Գերագոյն իշխանութիւնը քաղաքական դատաւորութեան պաշտօն մը կը վստահի այնպիսեաց ձեռքը՝ որոնք ընդհանրապէս կրօնական իշխանութեամբ արդէն բացայայտէս ազդելու միջնակեալ ըլլալով՝ բանի միջոց գործածելու նուազ կարօտութիւն կունենան․ և այս՝ յառաւել անպահովութիւն և անհաղորդութիւն կրօնակից հպատակաց Մեծի Տէրութեանն։

Այս ստորաձևութիւններէն մէկն եղած է միշտ մեր Պօլսոյ Պատրիարքը որ և միշտ Ազգերին գլխաւորն ու առաջնորդը եղած է։ Առանձնակ Պատրիարքը իրեն ստորադրեալ կղերական ժողովովը՝ ի սկզբանէ անտի Մեծի Օսմանեան Միապետութեան ներքև Ամենա-նուէր Ազգութիւն մը ներկայացուցած է։ Յայտնի է թէ որչափ ընդարձակ իշխանութիւն ստացած կայլոյ Ազգը թէ Պօլսոյ և թէ գաւառաց մէջ իր գլխաւորին. թէ հոգեւոր իշխանութեանը հսկող է թէ դատաւորական իշխանութեանը կարգը գանուելովը․ շատ, շատ ընդարձակ իշխանութիւն մանա-

Digitized by Google

ւանդ ազնուականի ժողովրդեան մը նկարագիրն՝ որ հինգ դարէ 'ի վեր քաղաքականութեան կեդրոյն մէջ գրեթէ աննշմարելի էր մինչև ցարդ․ առանց ուրիշ կենդանութեան տարր մ'ունենալու բայց կրօնքը միայն։

Ուստի ազգիս բաղդաւոր կամ դժբաղդ ըլլալը՝ Եղերիս անոր վրայ ունեցած ուղղակի ազդեցութեանն արդիւնքն է։ Արդ, ազգիս ներկայ տարաձայնութեան մէջ պատճառած միութիւն մը գտնալու համար հարկ է զայն իբրեւ օղակ մը համարիլ, որ սակ չիկենար․ այլ հարկաւ նախադասի մը և անկէ առաջիններուն հետ կապուած է, և յետադասի մը ու անկէ ետքիններուն հետ պինդ կապուի։ Այսպէս կազմեալ ամեն ազգային շղթայ․ և մերինին ծուլիկը ցարդ իսկ Եղերն է։

Արդեւոր դիտողութեանս բացատրութեանը մէջ մտնալէս առաջ, կանխաւ կը խնդրեմ ձենէ, ո՛վ Հայք, նոյնպէս առհասարակ ամեն ազգականներէս, որ ինչ ալ է նէ իրենց կարծիքը ազգային խնդրոց նկատմամբ․ գոնէ ներկայս վերծանելու առեննին այն տրամադրութիւնն ունենան՝ որ իմ գրչիս կարդէ, և միշտ հոգւոյս աղդեր է․ որով և միայն կարելի է եզրակացութեան մը հասնիլ․ այս է պաշտպանութեան կրօնական և ազգային իրաւանց և շահուց առանց կրից․ առանց կողմնակցութեան։

Digitized by Google

Մեր մէջը այժմ սովորական հարցում մ'է. «Դուք ո՞ր կողմէն էք»։ Քաղաքական կարեւորութիւն համարեալ է հարցմանս պատասխանը տալ, զոր ներելի չէ բացատրութեամբ ընկրկիլ. վասն զի խնդրոյն հարցնողը գէթ կամ հակառակորդ կը համարի՝ կամ երեսպաշտ։ Որդ ըսելու է. «այս կամ այն կողմէն եմ»։ Եթէ երկուքնիդ համակարծիք գտնուեցաք՝ խաղաղութիւն ունիք իրարու հետ. քանի որ մի կը տածէք ՚ի սրտի ընդդէմ հակառակորդաց, երէ-ոյթական պատճառներէ միայն գրգռուեալ։ Այս երկու հակառակ կուսակցութեանց մէջ են Սահմանադրականք եւ Հակասահմանադրականք. կամ որ նոյնանշանք են, լուսաւորեալք եւ խաւարեալք, յառաջադէմք եւ յետադէմք, հաւատացեալք եւ անհաւատք։ Զարմանալին սա է՝ որ երկուքին ալ դրօշը նոյն վերնագիրը կը կրէ. որ է Կրօնք, Ազգութիւն եւ Գերագոյն իշխանութեան հըպատակութիւն։ Ըսել կըլլայ արդ, որ կրօնքն ու ազգութիւնը տիրողը թող կրօնակիցն ու ազգակիցը թշնամանէ եւ վատահամբաւէ։ Բայց ինչո՞ւ, մինչեւ ե՞րբ եւ ի՞նչ պիտի ըլլայ օգուտը։

Ինչո՞ւ. վասն զի Սահմանադրական Սա-չութիւնը ապօրինաւոր ընթացք բռնեց. Վասն զի այս կամ այն օրագիրները ընդհանուր Կղերին եւ մասնաւոր արժանապատիւ-

անհատից նախատինք ըլլին. վասն զի Երու-
սաղէմայ պատրիարքը այս օր ընտրելու է և ոչ
այն : Ահա մէկ կողման պատասխաններուն բո-
վանդակութիւնը, որուն հակառականաբար
յար և նման են միւսինը : Ինչու. վասն զի
Վարչութիւնը՝ որ խիստ օրինաւոր ընթացք
բռնած է՝ Թշնամանուեցաւ. վասն զի յիշեալ
օրագիրը՝ որ ՚ի պաշտպանութիւն ազգային շա-
հուց խօսեցաւ՝ իրենց ազատախօսութեանն
համար միայն Թշնամանուեցան. վասն զի Եր-
ուսաղէմայ Պատրիարքը այն օր ընտրելու է
և ոչ այս : Եւ ասոնց վրայ ով կրնայ համբերել
որչափ յայտարարութիւններ, որչափ ստորա-
գրութիւններ :

Սիրելիք, ես ձեզի մի վիճիք ալ չեմ ըսեր,
այլ կը խնդրեմ միայն որ աւելի լոյս ստանա-
լու ջանաք ձեր վէճին վրայ :

Ենթադրեցէք թէ մէկ կողմը միւսին ըստ
ամենայնի զիջանէր. կամ որ նոյն է՝ կողմ ամե-
նեւին չըլլար. դիցուք թէ Սահմանադրութիւն
չըլլար. ազգը խաղաղութիւն պիտի վայելէ՞ր.
ես այդպէս չեմ կարծեր : Ես համոզեալ եմ
թէ ինչ որ այժմ է՝ ժամանակին արդիւնքն է
որ կարելի է ուրիշ ձեւով մը ուրիշ անուամբ
մը ներկայանար մեզ. բայց կանուխ կամ ա-
նագան ըլլալը՝ հարկ էր, որ ազգս թմբութե-
նէ զերծանի : Կարեւոր է որ Ազգայինքս, մա-
նաւանդ Կղերը ճշմարտութեան համոզուին,

Digitized by Google

որով միայն կարող կըլլան ազգին ներկայ վէճակին վրայ տրամախոհելու՝ յօգուտ ապագային ։ Ա՛յն զի ազգութեանս կենաց և մահու ծանրակշիռ խնդիրներուն մէջ կռուելու համար միայն կռուելը՝ անմտութիւն է, և քան զանիկայ չեզոքութիւն մը աւելի վնասակար․ քանի որ խաղաղելու տրամադրութեամբ մերցիլը՝ քաղաքական առաքինութիւն մը կրնայ համարուիլ ։

Արդ, սիրելի ընթերցող․ եթէ ինծի պէս դու ալ անդիմադրելի ազդեցութենէ մը ազա-եալ՝ կամք ունիս դառն անցքերս աղբիւրը նշմարելու՝ խնդրեմ քենէ ըրէ՛ ինչպէս որ ես ըրի, և յետոյ միատեղ խորհրդածենք ։

Երևակայութեանդ ընդարձակ դաշտ մը ասպարէզ տուր և հոն համահաւաքէ գունտիս վրայ որչափ որ Հայ կայ․ մինչև գոգցես նշմարես բոլորտիքդ 3—4 միլիոն Հայ (ինչպէս կենթադրուի թէ կայ) ։ Ի՞նչ ըղձալի միութիւն ։ Հիմա, հարցու ամենուն միանգամայն․ Ե՛ղբարք, դուք ամէնքդ ալ ազգակի՞ց էք ։ Սակայն կը լսես այնպիսի բարձրագոչ թնդիւն մը որ երևակայութեանդ գմբեթը կը սարսի․ « այո՛, այո՛․ մենք ազգակից ենք․ մենք Հա՛յ ենք »․ (ազգուրաց հրէշները ՚ի բաց առեալ) ։ Հիմա, երկրորդ հարցումդ ըրէ ։ Դուք ամէնքդ ալ Քրիստոնեա՞յ էք ։ Թնդիւնը կը կրկնապատկի․ « այո՛, այո՛․ մենք ամէնքնիս քրիստոնեայ ենք » ։

Հիմա, երրորդ հարցումդ ըսէ։ Ինչու ուրեմն յանուն Քրիստոնէութեան և յանուն Ազգութեան կը տարաձայնինք փոխանակ միաբանելու։ Ականջ տուր հիմա. կրնամ սա խառնաձայն աղաղակէն պատասխան մը որոշել. զարմանքը։

Այս—այսչափն է միայն որ չեն կրցեր միաբանիլ։

Այս խնդիրը ուրեմն լուծման կանոնի մը տակ ձգելու է, և հարկաւ զանի քննական կարգին վերածելու համար, ներկայ ժամանակը յետադաս ըմբռնելով՝ քիչ մը անցեալէն սկըսելու է։

Այս անցեալը անհատնում մասերէ բաղադրեալ է զորս փափաքողը կրնայ լման գտնալ պատմութեան մէջ։ Ներելի ինծ ուրեմն անոր միայն այն մասը ընտրել որ շօշափական յարաբերութիւն ունի ներկայիս հետ, և յորում՝ իմ հասակակցացս վկայութիւնը՝ համաձայն երիցագոյններուն հետ. զի ամենքս ալ ականատես վկայք ենք. և ինչ որ արդի սերունդը կզգայ այժմ մեզի հետ, անոր ուղղակի արդիւնքն է. այսինքն երեսուն և երեք տարու միջոց։

Այս միջոցը իբրև երեք Շրջանակի բաժնուած կըմբռնեմ։ Ա. Շրջանակ. յառաջ քան զԹանզիմաթ, յորում ազգիս Պատրիարքը ընդհանուր Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ Թէմական իշխանութեանը հետ մէկ տեղ՝ քաղաք-

րագոյն Կառավարութեան կողմանէ միակ և բացարձակ իշխանութիւն ունէր ազգիս վրայ, հանդերձ պատժական արտօնութեամբ ։ Բ. Եղանակ. յետ Թանզիմաթին. յորում Պատրիարքին բացարձակ իշխանութեանը սահմանափակեցաւ խորհրդական ժողովով մը, և պատժական արտօնութեանը տակաւ առ տակաւ նըւազեցաւ. զոր վերջապէս Բարձրագոյն իշխանութիւնը ուղղակի իրեն սեպհականեց ։ Գ. Ներկայ Եղանակ կամ Սահմանադրութիւն ։

Իմ դիտաւորութիւնս չէ այս եղանակներուն վրայ պատմական կերպով խօսիլ, որ ընդարձակագոյն հմտութեան և ժամանակի կարօտ է. բայց որովհետև անոնցմէ ամեն մէկը մէյմէկ ազդու տպաւորութիւն ըրած է Հայ հասարակութեանս վրայ. ապագային տրուելու ուղղութեանը վրայօք լոյս մը տալու ըղձիւս՝ արագ տեսութիւն մը միայն ընել կը համարձակիմ ։

## Ա. ԵՂԱՆԱԿ. ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԹԱՆԶԻՄԱԹ

Հայ անուամբ միայն մէկ հասարակութիւն. Բարձրագոյն Դուռը Միլլէթի Էրմէնիան Նիզամնամէի տիտղոսով՝ մէկ Պատրիարք մը միայն կը ճանչնայ. այս Պատրիարքին լիովին իշխանութիւնը տրուած է ազգը կառավարելու. իրեն առ Դուռն տուած զեկուցմունքները իսկոյն կընդունուին ։ Ժողովուրդը տգէտ, և կրօնա-

կան խնդրոյ համար բորբոքելու միայն յարմար. Եղերը անուս, և Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւասութեանը անգէտ, ուստի չէր կրնար իրեն յանձնուած աւանդը պաշտպանել: Հռովմէական եկեղեցւոյ խորին հեռատեսութիւնը՝ ժամանակին քաղաքականութեանը ընթացքին ուշադիր, և իր կուսակցութիւնը որ և է գնով ազգիս մէջ ամրացնելու յօժար. քանի որ Պատրիարքական իշխանութիւննիս ժամանակին յղի ըլլալուն գոգցես անտեղեակ. միայն նիւթապէս իշխելու դրութեան հետեւելով՝ բարոյապէս տիրելու ապիկար:

Ո՛վ Տէր Աստուած, եթէ մեր Եղերին և անոր պարագլխոյն, Օսմանեան Մեծազօր Տէրութեան հպատակութեանը ներքև քու աջովդ պատսպարեալ քրիստոնեայ ժողովրդոց Նորին ձեռամբ ընելու մօտալուտ այցելութիւնդ հասկնալու չափ՝ գոնէ կանխագիտութիւն շնորհուած ըլլար Քենէ, գուցէ զանձինս և ժողովուրդը տրամադրէին այդ մեծ աւուր վարդագոյն լոյսը տեսնալու՝ որ ծագեցաւ Կիւլխանէյէն. (1839 Նոյեմբեր 9)

Բայց ինչ կըսեմ ես. ո՜չ ապաքէն քու առաջնորդ արևմուտքէն կը փայլէր, և որչափ աւելի դէպ յարևելս կը մօտենար անոնք նոյնչափ աւելի կը կուրանային զանի տեսնալու. մինչև մէկ ամուսնական օրինօք ըստ մարմնոյ՝ և մէկ աւազանի ծննդեամբ ըստ հոգւոյ քու ժողո-

Digitized by Google

վուրդդ ինչ ինչ խաւարութեանքը հերձող օտար տարրը՝ փոխանակ մեզմէ փոքր մի ու եւս աճե-քելու՝ որ ողջ մարմինը չի խառնակի յառաջ քան զօրն այցելութեան քո, անոնք եւս քան զեւս գրգռեցին և զայրացուցին զայն. մինչեւ տեղի տրուեցաւ ապօրինաւոր ամբաստանութիւններ ընել իբրև ընդդէմ աղանդաւորաց այն ազգակցաց վրայօք՝ որոնց համար Լուսաւորչական եկեղեցւոյս՝ վարդապետութեանց փրկութեան դուռը երբէք գոց չէ. և իբրև ընդդէմ ապստամբաց անուն դնէ՝ որոնց հաւատարիմ՝ հպատակութեանը վրայ Բարձրագոյն Դուռը ինքնին երկբայելու տեղի չէ ունեցեր երբէք։

Ափսոս, ափսոս։ Ճշմարտութիւն ան է որ ես ինքն քանի քանի անգամ հարցուցեր եմ ազգիս քահանայներուն և ծերերուն թէ, 'ի կրօնէ այս ազգակից եղբայրքը հալածելու չափ գրգիռ մը, կամ 'ի քաղաքականութենէ՝ անոնցմէ օձերէ խորշելու չափ մեկուսանալու ատելութիւն մը ունեցեր են, և դեռ ունի՞ն արդեօք։ Ամենեն ալ վկայութիւն տուած են թէ ոչ. բայց եւ այնպէս կրօնական ինչ ինչ խնդիրներ իբրև քաղաքական ոճիր թարգմանուելով՝ չարութեան ոգւոյն դրդմամբը՝ մեր այդ եղբայրքը պանդխտուեր, բանտարկուեր, կողոպտուեր, կանամբք և որդւովք մինչև օրօրոցի մանուկը հալածուեր են։ Դարձեալ կրկնեմ թէ խորհելու

կերպը սա է որ ցարդ իսկ այնպէս կը համարուի թէ Հայը՝ զանոնք Կոմնէնն անուամբ հալածեր է իր մէջէն. քանի որ, ինչպէս առաջ նոյնպէս այժմ, Հայը իբրև քրիստոնեայ՝ ՚ի կրօնակցութենէ և իբրև հայ՝ յազգակցութենէ չի սարամերժեր զանոնք։ Անտարակուսելի է այդ՝ որ այսպիսի քստմնելի դէպքին մէջ Բողոմիլեան կամք չի կայ. այո, Հայը չէ Յոյնը հալածողը։ Հանելուկ մի է այս խնդիրը՝ օտար սաւերով նշանակուած, զոր իսկ՝ թէ ժամանակին՝ ազգիս Պատրիարքը և Վլերը կարենային նշմարել։ Կը սխալիմ արդեօք եթէ ըսեմ որ այս դառն եղելութեանց դարմանը դար մը առաջ Նախախնամութիւնը ազգիս ցոյց տուած էր Մխիթար-Աբբայն Սեբաստացին իրեն խրկելով՝ փարատելու համար այն թանձր տգիտութիւնը՝ որուն արգասիքն են այս ամեն չարիք. ոչ ապաքէն պարտաւորեցաւ նա ծովէ ՚ի ծով փախչիլ ուրիշ բան հետը չառնելով իր երկրէն և ազգէն բայց նոյն Սէրը միայն. մինչեւ, իբրև Թափառական աղաւնի մը, ոտքը կոխան դրաւ Վենետիկի լճակին անմարդաբնակ մէկ ծանծաղուտը. ուր համահաւաքեցան իր շուրջը Ազգիք հալածելոց Սրբոցն և Իմաստնոց նախնի Թարգմանչաց և մատենագրաց. և իսկոյն այդ կղզեակը եղաւ տաճար մը իմաստութեան, աւանդարան մը մերս գրականութեան և լեզուի՝ որ Հայուն միակ սեփ-



Digitized by Google

հակառակութիւնն է այժմ աշխարհիս վրայ ։

ՄԷԿ Մխիթարեան տաճար, ներէ որ համառօտ վկայութիւն մը տամ հոս՝ քեզի յառաւել երախտագիտութեանս ։ Իմ բազմադիմի թերութիւններս խմ են 'ի քնէ. իսկ թէ դպչն ինչ ստացածոյ գովելի յատկութիւն մը ունիմ, որով և ազգիս փոքր ծառայութիւն մը կարողացայ ընել, այդ քու շնորհդ է ։

Խորին են Նախախնամութեան գաղտնիքը. բայց ըսէ՛ դու ինծի, սիրելի ընթերցող, երբ եղեր է որ անիրաւ ուժը իբրև օրինաւոր յաւիտեան իշխէ, կամ ապօրինաւոր հալածանք մը օրինաւոր արգիւնք բերէ ։

Այո, Տէարք իմ. ամեն մեղք ունի իր խայթը և ամեն յանցանք իր քաւութիւնը իր մէջը ։ Ու ինչ ծանր ինչ անհանդուրժելի քաւութիւն՝ երբ առաջին անգամ մեր ազգային Պատրիարքը տեսաւ իր հալածեալ որդիքը՝ զատ ազգ մը ձևացեալ. տեսաւ Լուսաւորչական Եկեղեցին՝ ալ յաւիտեան անդուգելի կերպով խրամատեալ. տեսաւ յանկարծ իր Քահանայապետական և քաղաքական իշխանութիւնները՝ նուազեալ և նուաղեալ. և իբրև թէ այս չափս բաւական չըլլար, ստիպեցաւ նոր հաստատութեան գլուխ՝ և իրենին հակառակաթոռ Պատրիարքութիւնը շնորհաւորել՝ ըստ օրինի քաղաքականութեան. որև կերպով մը խրատ ունինք տուայնու, մերայնոց անխոհեմու-

Digitized by Google

թեւամբը բռնելու միշտ յաղթողական անհարկու-
թեւամբ. «Երանի որ հալածեալ իցեն վասն
արդարութեան զի նոքա ժառանգեսցեն զեր-
կիր»:

Եթէ արդարութիւն չէր այս եղբարց դէմ
բռնութեան ընթացքը, մի թէ արդարութիւն է
կարծել թէ հայ ժողովուրդը բացարձակ զար-
ծանկից եղած ըլլայ այս ոճրոյն: Ո՜հ, յոյժ ճշմա-
րիտ է մեզի համար այս առածը. «Հարք
աղոխ կերան և որդւոց ատամունք առան»:

Մեր Եղբարք հայոց ազգի, հիմա քեզի կը
հարցնեմ. (միշտ քանի մը անհատներ մէջէդ ի
բաց առեալ): Այս ծանրակշիռ պարագային
մէջ դու ի՞նչ զգայիր: Իրաւունքիդ նուաղումն մը:
Բայց սատոր վրայ չէ խնդիրը. ի՞նչ բարոյական
օգուտ հանեցիր ազգային վնասէս՝ գոնէ ապա-
գայի՛ց առաջքն առնելու համար՝ որմէց այս
արկածը ալ բաց դուռ մը կը թողուր: Մինե-
ղանար եթէ ճշմարիտը ըսուեցեմ: Որքն բե-
րանք ատրճանակ և շատ ցաւեցար. ի՞նչ օգուտ.
Բայց քի՛չ մը երբ, ինչպէս ամէն ախտաւորաց
յատկութիւնն է, թմրեցար ու նիրհեցիր:
Միթէ մարդկային ազգի փրկութեան համար
ձիթենեաց պարտէզին մէջ աղօթող մեր Տէրը,
չքնա՛ղ քեզի Եկեղեցւոյ վտանգները նկատելով
և քու ծանրացեալ աչուըներդ տեսնալով՝
«Արթուն կացէք և աղօթս արարէք, զի մ՛ մտ-
նիցէք ի փորձութիւն»:

Digitized by Google

## Բ. ԵՂԱՆԱԿ ՅԵՏ ԹԱՆԶԻՄԱԹԻՆ

Օսմանեան մեծազօր և առատապտուղ Տէրութիւնը 'ի վաղուց անտի իր հաւատարիմ հպատակացը անդորրութեանը միշտ խնամ տարած է, և անոնց կրօնական պաշտամունքը վեհանձնական խորհրդով ազատ թողած։ Այսպիսի ազատամտութիւն մը նշանաւոր է. պատմութեան մէջ. մանաւանդ՝ երբ յիշենք 'ի պատճառս կրօնի ոչ միայն անկիրթ այլադեններէն քաշուած հալածանքները, այլ նաև վաղեմի քաղաքակիրթ Հռովմայեցիներէն Քրիստոնէից և Հրէից դէմ, և ապա Քրիստոնեայ թագաւորներէն Մահմետականաց և Հրէից դէմ գործադրուած անլուր կտտանքն և դառն հալածանքը։

Այս ակնարկութիւնը հոս ընելս ուրիշ նպատակ չունի՝ բայց միայն կրկին վկայութիւն մը տալ, երախտագիտութեամբ հանդերձ, մեր վեհափառ Տիրոջը և անոր Կառավարութեանը, այն ներքին համոզմամբ թէ Հայը միշտ իր բաղդը անոր կիցը ըմբռնած է, որով միշտ հաւատարիմ կենալը՝ իրեն երջանկութիւն։

Վերոյիշեալ Ա. եղանակին մէջ Հայը դեռ մնաց լոյս ըստ բաւականին չունենալով, որ կրթութեան արդիւնքն է, նիւթապէս միայն երջանիկ էր իր հպատակութեամբը. իսկ յորմէ

Digitized by Google

հետէ մեր Վեհափառ Տիրոջը կառավարութեան շնորհիւը նոր բարեկարգութեանց արդիւնքը կը վայելէ՝ բռնաւորեալ Հայը ոչ թէ միայն իր անձնական անդորրութիւնը այլ և ազգային էութիւնը, այլ և իր կրօնքին պահպանութիւնը, Լուսախնամութեան յատուկ շնորհիւը Օսմանեան հովանաւորութեան պարտական ըլլալը բաւ գիտէ. և Քրիստոնեայ երկիրներ գաղթող մեր ազգակից եղբարցն անհետանալը՝ ըսածիս ճշմարտութեանը տարակոյս չի թողուր։ Մենք Հայ Քրիստոնեայքս՝ մինչև ցայսօր իսկ ունի՞նք արդեօք իրաւութեան ներողամտութիւնը զոր Օսմանեան Տէրութիւնը ունի մեզի համար. և եթէ մենք իրար 'ի զուր ամբաստանելով՝ անոր զէնքովը, այս քանի քանի անգամէ, եղբարք զեղբարս հալածելու ելանք՝ և ան միշտ մեզի խնայեց, հապա ի՞նչ պիտի ըլլար եթէ մենք զէնք ունենայինք ձեռուընիս . . . . . . . ։

Աստուած Օսմանեան Տէրութիւնը պահպանէ, և մեզ զգաստութիւն շնորհէ։

Քննենք հիմայ թէ 22 տարիէ 'ի վեր մեր Օգոստափառ Տիրոջը իր ամեն հպատակացը տուած արտօնութեանէն ինչ է ցարդ մեր քաղած օգուտը։

Թանզիմաթը գտաւ զմեզ խիստ ողբալի վիճակի մէջ։

Հայ ժողովուրդը, որ ընդհանրապէս

Digitized by Google

արուեստաւոր էր, Եւրոպական ճարտարութեան առջեւն շուարած, վաճառականութեան անտեղեակ, գիտութենէ զուրկ. հետեւապէս դժբաղդ: Աչերը, որ Հռովմէական հայութեան ազդեցութեանը առջեւն օր ըստ օրէ աւելի տկարացած էր, բոլորովին ապշած. Իսկ Պատրիարքութիւնը, որ այժմ քաղաքականապէս՝ պատժելու իրաւունքը հետզհետէ կորսնցնելու ճամբան մտեր էր, դեռ ըստ կողմէ տէրութեան՝ քանի մը ազդեցութիւն ունեցող ազգայնին աւագաց հպատակած:

Արդ, քաղաքականութեանս նոր ասպարէզին մէջ՝ նախապատրաստութիւն չունեցող և անառաջնորդ ժողովուրդը, քան Եւրոպական տաքարգու ազգերը իրեն օրէնք համարեցաւ. այս է, արտաքուստ գոնէ քաղաքակրթեալ երեւալու համար՝ զգեստափոխութիւն, և ղեկխութիւն. և տար այն ամենայն մոլութիւնք որ Դէութականութեանս հետեւանք են Ալաֆրանկայ ախաղաւաղ. մինչև ճոխութիւնք վատնեց. և որ միայն տգէտն էր՝ եղև աղքատ, մոլի և տգէտ:

Դիտելու է որ տարափոխութիւնս առաւելին Պօլսոյ և Զմիւռնիոյ մէջ էր և միւս գաւառականք եղբարց դեռ անցած չէր:

Այո, Հայը աղքատ և կարօտ էր: Աղքատութիւնը մայր է ճարտարութեան. և Հայը անկից սա միայն շահեցաւ որ տգէտ ըլլալը զգայ խղճի մտօք: Այս զգացման կից է ուսա-

նելու փափաքը. բայց ո՞ւր երթար և ուսանէր: Հայաստանի ոսկեդարը ան ատենն էր՝ երբ Կղերը ուսեալ էր և ժողովուրդը անոր կը դիմէր որ ուսանի: Նոյնպէս եղած նաև ու Եւրոպացիք, որոնց թանձր տգիտութեանն ատեն՝ վանքերը մէյմէկ աւանդապահ էին նախնի Յունաց և Հռովմայեցւոց լուսաւորութեանը՝ որոնցմէ տակաւ առ տակաւ տարածուեցաւ ժողովրդոց մէջ: Այլ թէ մեր դարպասընկալ մեծաձոխ՞ վանքերը և հանգիստ ապրելու ճգնարաններն ալ նոյնպէս եղած ըլլային:

Քեզի կը հարցնեմ, Կղերդ Հայոց Եկեղեցւոյ, ո՞ւր երթար քուկին ժողովուրդդ և ուսանէր, քանի որ դուն չէիր կրնար ուսուցանել. քանի որ դուն այսօր իսկ հոն ես՝ ուր էիր հարիւր տարի առաջ: Ա՜չ ապաքէն երբ տասապրդ և աւելոք վանականացդ մէջ անգամ դեռ ստորագրութիւնին գնել չի գիտցողներ կան եղեր. և այս իրենց իսկ վկայութեամբը:

Պարտաւորեցաւ ուստի Հայը ոչ միայն իր զգեստին համար Եւրոպացիին դիմել, իր աւուր պարէնին համար Եւրոպացիին ծառայել. փոքր ինչ արուեստ կամ առուտուր սորվելու համար Եւրոպացւոյն թախանձել, այլ և գոնէ անընտնէ ապրելու չափ ուսմունքը սորվելու համար դարձեալ Եւրոպացւոյն դուռը երթալ: Ա՛ Կղերդ Հայոց, ո՞ւր էիր որ քու-

մանկութդ վաղուցուն յուսո Եկեղեցւոյդ վարժեալք ըլլայիս և դու ազատ մնայիր քան զառաջինան դառնալոյն փորձութենէ մը որուն տակ միւսանգամ՝ ճմլեցար ։

Այն ատեն տեսնուեցան այնպիսի օտարներ որ Նոր Աշխարհէն կուգային՝ յատուկ սիրոյ և խաղաղութիւն ողջոյններ բերելով մեզի, իբրև առ եղբարս ՚ի Քրիստոս Յիսուս ։ Այնպիսի հակառակորդք հայաստանեայց Եկեղեցւոյ՝ որոց նմանը մեր Կղերը երբէք չէր տեսեր և չի ճանչցաւ ալ առջի բերանը այնպէս ըլլալնին ։ Շատ գովութեամբ կը խօսէին անոնք մեր Եկեղեցւոյ հնութեանը՝ և մանաւանդ այն կէտերուն վրայ՝ որով Հռովմէականէն անկախ է ։ Եւ քրիստոնէութեանս ազատ սկզբունքը կը պաշտպանէին մեր օրինակաւը՝ քանի որ իրենց երկրին մէջ գերութիւնը սրբացուցած են. որուն դառն լուծին տակ, ընդ դէմ կրօնի, քաղաքականութեան և խղճի, դեռ այս ժամանս կը հեծէ Մարդկութիւնս ։ Այս ոչխարազգեստները մեր փգէփո—բէւոնը վրայէն միայն իրենց շահը կրնային ընել. ուստի առջի գործերնին եղաւ, իբր թէ մարդասիրութեան ուղւով, դպրոցներ հաստատել՝ պարզապէս ուսմունք և լուսաւորութիւն սորվեցընելու համար. որով և աջողեցան իսկ հարևանցի քանի մը ուսման սկզբունքներու հետ մէկ տեղ՝ ՚ի դայթակղութիւն միամտաց սպրդել

իրենց վարդապետութիւնը ։ Անգղիքններն առ-քածման հաւատոյ Առաքեալք կանոնաւորէին, և փոխանակ երթալու առ ազգս յորս անունն Քրիստոսի ոչ յիշի՝ յաւէտ առ մեզ կուգային՝ որ Քրիստոսի ժամանակակից Քրիստոնեայ կրնանք սեպուիլ ։ Ի՞նչ գոյներով չի նկարեցին զմեզ արդեօք իրենց Նոր Աշխարհի եղբարցը և բոլոր Եւրոպիոյ ։ Ցըցուցին զմեզ իբրև վայրենեաց խումբ մը , Քրիստոնէութեան և Մահմետականութեան խառնուրդ խուժան մը ։ Այսպիսի կ՚անգղիացւոյ առաքելոց հոգին , զուրկ բուն անգղիական ողջամտութենէ , միայն ծածուկ կրնայ ըլլալ․ որ եթէ հաստատ կամ՝ հասնի՝ իրենց առաքելութեան վախճանը հասած է ։

Շատ չանցաւ հասկցաւ հայ Ազգը այս մեծ վտանգը․ զայրացաւ յանձն իւր , մանաւանդ երբ հասկցաւ իր անկարութիւնը ասոր դարման մ՚ընելու ։ Իր Ուսուցչական եկեղեցւոյ վարդապետութիւնը ի՞նչպէս պաշտպանէր առանց Հայ քահանայ մը , որ կրօնից իրաւագէտ չէր և չէ․ ազգին վրայ անոնց տարածած անտեղի լուրերը Ազգը ի՞նչպէս ուղղէր՝ որ լեզուագէտ և քաղաքականութեան տեղեակ չէր և չէ ։ Ու ի՞նչ դժուարին բան իրեն համար օտարին լեզուն սորվիլ , քանի որ անոնք իրենը բաւականին ուսեալք էին ։ Հարկ էր ուրեմն անուղղակի միջոցի մը դիմել — Ի չգոյէ կարգ-

ըու–թեան ։ Ուստի ազգային դպրոցներու մէջ նոյն լեզուաց և ուսմանց ուսուցիչներ դըր-ուեցան՝ զորս անոնք կը սորվեցնէին․ և այս-պէս հայ մանկութիւն առ նուազ յաճախելն ընդ-հատեցաւ․ ասով՝ խաղաղերես հակառակորդք, որոնց համար հնարք պակաս չէր, աւելի գրգռեցաւ ։ Հաւանական կրթութի որ կը մտա-փաքէր թէ իր նորահաստատ եկեղեցին ալ հալածուի՝ որպէս զի հիմնովին արմատանայ․ մեր Կղերին կողմանէ ալ, կարծեմ, հալածելու փափաքը պակաս չէր, բայց ժամանակիս քա-ղաքականութիւնք անհնարին կընէր զայն․ բայց և այնպէս՝ մասնաւոր հակառակութիւններն ու նզովքները հալածանաց արդիւնքն ունեցան՝ արտաքին զօրաւոր պաշտպանութեան մը շնոր-հիւ ։ Ու ահա դարձեալ հերձաւ Հայ ժողո-վուրդը և եկեղեցին, իր կրօնակցացը վրայ մեր Պատրիարքութեան հաւասարազօր քաղաքա-կան իշխանութիւն ունեցող Ազգապետի մը հաստատութեամբը ։

Ու ահա եզանք մօղ լէզո—ա— և երէ+ նքե-+օղ Երէ+ Մ՛չգ ։ Հապար ափսոս․ քիչ աւմզ ։

Հիմա, կրկին քեզի կը վերադառնամ, Կղերգ լուսաւորչական ։ Այս երկրորդ և ամենածան-րակշիռ պարագայիս մէջ դու ինչ զգացիր ։ Գիտեմ որ անձնական շահդ միայն չի բերելու-չափ զայրացար․ բայց ըսենք թէ առջինին վրայ թմրեցար՝ զի անվարժ էիր․ այս երկրորդիս

Digitized by Google

կրթութեամբ քեզմէ փորձառու պաշտօնէի մը գործ կատարուելը ցրուեցէ, ի՞նչ ըլլար ոչխարներդ օտար փարախներու դանէն առանց որեւէ ընդդիմութեան հեռացնելու և զանոնք կրկին Լուսաւորչայ դաւթին համախմբելու համար։ Մի՛թէ կրկին ներհեցիր. մոռացա՞ր դարձեալ մեր Տէրոջը խօսքը "Արթուն կացէք զի մի մտանիցէք ՚ի փորձութիւն . . . . . . Եւ. քու ըլլութիւնդ իսկ տխուր պատասխան մըն է։

Իմաստութիւնը աւելի օգուտ կը քաղէ իր գլուխն եկած փորձանքներէն քան թէ անմիտը առ ձեռն ունեցած բաղդէն։ Որդ, թէ դու ոչինչ օգտեցար ապագայիդ համար, ժողովուրդը դայլն ինչ քաղաքական օգուտ քաղեց անկից որով և մեծ օգուտ ըրաւ յետոյ Եկեղեցւոյն. այս է, վերոյիշեալ անուղղակի դարմաններդ շահը, իմա՛, դպրոցաց մէջ օտար լեզուաց ուսումը. և զարմանալին սա է որ այս ուսումը ուղղակի առիթ տուաւ քիչ մը ազգային լեզուի դպրութիւնն ալ ընդարձակելու. և խիստ ուշ հասկցուեցաւ թէ հայու մը համար ամօթ է իր լեզուէն աւելի օտարինը սորվիլ։ Այս ի՞նչու. արդեօք փոքր մանկանց շատ ալ ուսման ճաշակը չտալու դո՛ւ, որ ուսմանց մատակարարը պէտք էիր ըլլալ։ Ո՛չ ապէ՛. քանի որ ժողովուրդը ագէտ էր՝ երկու անգամ՝ խղճտեցաւ և երկու նոր բաժանմունք պատճառեցան. իսկ այժմ որ

փոքր ինչ լուսոյ նշոյլ ունի մտացը մէջ՝ ալ չի խլրտիր. ահա Եկեղեցւոյս մեծ օգուտը 'ի լուսաւորութենէ ժողովրդեան։ Գոնէ այս վերջին կէտը նշմարէիր ներկայ անցից մէջ, ո՛ Կղերդ հայոց, և չի ներէիր որ իբրև անհաւատ բամբասանքին քու այդ որդիքդ՝ որ ուսումը կը սիրեն, և քանի որ կուսանին Կրօնքնին աւելի կը սիրեն և կը յարգեն։

Տեարք իմ, Հայր Թէ որ գեղեցիկ բան մը՝ չխաշխարհիկ բան մը ունի, այդ իր Կրօնքն է։ Այն խղճի ազատութիւնը՝ զոր Եւրոպացիք տանալու համար խարոյկներու բոցով, սրով և արեամբ փորձուեցան, և այսօր իսկ փիլիսոփայութիւնն ու քաղաքակրթութիւնը կը ձգնին 'ի գլուխ հանել, Հայր անոր սկզբունքը ունի Քրիստոնէութեանը սկիզբէն. և եթէ ուսումնականութեամբ Կղերին վրայէն ատխոտութեան կեղտը վերնայ՝ Եւրոպացի և մատատաէրն ու աստուածաբանը զմայլին պիտի օր մը անոր գրութեանը վրայ։ Սիրելի ընթերցող, ըսածիս ճշմարտութիւնը քու վրադ փորձէ. բաղդատէ խղճիդ Յունաց և Լատինացւոց Եկեղեցեացը նկատմամբ մերինին խաղաղական տրամադրութիւնը Քրիստոնէական համակրութիւնը. և ըսէ. Թէ որ անոնք ալ եղբարու և մեզի նկատմամբ նոյնը ունենային ինչ կը պակսէր արդեօք ընդհանուր Քրիստոնէութեան միութեանը։ Այսպիսի գեղեցիկ

և սուրբ դրութիւն մը քաղաքակրթութեան կը նպաստէ մանաւանդ, և ոչ թէ կը հակառակի։ Ու ի՞նչու արդեօք այսպիսի Սիրոյ աւանդը ձեռքն ունենալովն անգամ մեր Կղերը չի կրցաւ գայթակղութեան առաջքն առնուլ։ « Կոյր ըլլի 'ի ճառագայթից արեգական և ագիտութիւն 'ի կատարեալ կենաց լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք »։ (Ե. Բ. Յեղ.)

## Գ. ԵՂԱՆԱԿ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ազգային կեանքը սա աւաղելի վիճակին մէջ էր, երբ 1850 տարւոյն սկիզբը, ազգային ուսումնական պաշտօնի մը վրայ եղող երկու գործակիցք՝ պատեհ առիթ ունեցեր էին մինչև ցարդ յիշուած խնդիրներուն վրայ խորհրդածելու. երբոր անոնցմէ կրտսերագոյնը, որ ան ատեն դեռ երիտասարդական աշխոյժն ունէր՝ մեծապէս վշտացած կը ցուցնէր ինքզինքը այն ամեն ապօրինաւոր միջոցներուն վրայ՝ որոնք ազգս բաժանելու և մասերը ստորաբաժանելու միայն դառն արդիւնքը ունեցեր են. մինչև համազգային անուամբ ամենափոքր միաբանութիւն մ'ալ անկարելի է . . . ։ Ու քիչ մը լուռ կենալէն ետքը ըսաւ. « Ի՞նչ կը հասկընայ արդեօք Հայն զՀայը հերձելով և 'ի զուր իրար մաշելով իբրև Տէրութեան թշնամիք. քամահելի ստութիւն, պժգալի վատութիւն։ Մարած է ազգս, մահագոյժ թըմ-

Digitized by Google

բերդ մ'է զանի պատած . հրաշք մը միայն , հը-րաշք մը , որ սթափի . այս թէ ոչ՝ այժմէն իսկ համարէ զայն մեռած ։ « Որք յայտնեցան և անդր ուր ապրեցեալ անկանի երկրպագութ-թիւն 'ի ներքս , 'ընդ քակել մաքառութեանն և երկնաւոր առաքինութեանն հետևող , և անձնվիրութեամբ ընդունել՝ յոյժ քաղցրանալ բարութեան ողջոյն ։ Բանդէ հաւատալ անկեալ անդամն որ յառաջագոյն սորուն ստերք մարմնոյ էին , դառնայ մարդ յարքայութեան առաջի մերձակայ դիականն » ։ (Եղիշէ Դ. Յեղ.)

Ան օրուընէ մինչև մեր ժամանակներս օտար սկզբունքները անոր ռամկին մէջ հեռ-ղհեալ ու եկն տարածուելով՝ մերթ դրամական օգնութեան , մերթ անձնական պաշտպանութեան , և մերթ իսկ հարկաց թեթեւութեան սիրոյն պատրուակներով այնպէս զգայի կերպով Եկեղեցւոյ փառքը կառուելաւ և Ազգութիւնը խորխորտամին կը մնանար , որ ողջամիտ ազգասիրաց ամենուն ալ առ հասարակ աչքը կը զարնէին . մանաւանդ երբ կը նշմարէին որ Եկեղեցին փոխանակ ջանքը կրկնապատկելու , առ անհոգութեանն յառաջադրաւոր , « Ննջէր և խորդայր » ։

Մեծդ Նախախնամութիւն , անհնարինքն 'ի մարդկանէ հնարաւորք են Քեզ . Դու որ չես կամիր թէ Հայկայ և Լուսաւորչայ անունները ազգաց ցանկէն ջնջուի՝ խրկեցիր Պարոն Հրեշտակը յայտնելութիւն ժողովրդեանդ ։

Digitized by Google

Սթափեցաւ նա այս աներեւոյթ տեսիլքովը իր թախծական թմրութենէն. և առաջին կենդանութեան ձայնը, առաջին բողոքը եղաւ, «Օրհնեա»։ Օծում մը կար ժողովրդական զգացմանց մէջ, անբռնաբարելի Արդարութիւն մը։

Այս առաջին անգամն էր որ ժողովուրդը իր խռովութիւնը կը պահանջէր. Հաւատքն ու Ազգը խօսէր. Աստուած և Վարդանանք խօսէին պաշտպան. և ով է որ անոնց դէմ մաքառի։

Ու ահա հրաշքը, ակնկալեալ ցանկալի հրաշքը։

Աւետաբեր Հրեշտակը փարեցաւ իսկոյն քանի մը անձնաւորէր եկեղեցականաց և աշխարհականաց միջին. ցրուեց անոնց մէջ Եկեղեցւոյն վտանգները, անոր դէմ մինչև ցարդ անդրդուելի հաւատարմութեան լարած և լարելիք որոգայթները. հասկցուց անոնց ազգին յոյսն եղող Պօլսոյ երիտասարդաց դէպ 'ի քաղաքակրթութիւն ունեցած եռանդնին, որ անկանոն և մոլորացածոյ դաստիարակութեանց յաւէտ 'ի վնաս ազգին կը լինէր քան թէ յօգուտ. զեկոյց անոնց թէ ինչպիսի մեծ գայթակղութիւն է եթէ ժողովուրդը ուսանի և կղերը անուս մնայ. բացատրեց անոնց որ Հայը իր սուրբ Եկեղեցւոյ գիրկէն չը զատուելով և իր բարքը Օսմանեան Պետութեան հետ միշտ հեզ պահելովը՝ քաղաքականութեան ասպարէզին մէջ նշանաւոր քայ-

բարիք մը կարող կ՚ըլլայ ընելու . վերջապէս համոզեց թէ ազգը ստրկութեան վհէն զերծանելու համար ազգային կանոնաւոր դաստիարակութիւնը ընդհանրացնելու է առհասարակ՝ Եկեղեցականաց, Աշխարհականաց և Գեղեցիկ Սեռին համար, անխտրաբար ուր և ըլլան :

Այս գեղեցիկ գաղափարներով բեղմնաւորեալ միտքերը 'ի միասին յղացան, և ծնաւ 'ի նոցանէ ազգիս փրկութեան Դշխոյն, որուն անունը Կանոն անուաներ էր ժողովուրդը մինչչեւ ծնեալն էր . բայց երբոր ծնաւ՝ այսպիսի անսովոր շքեղութեամբ Նաւի մը այդ սովորական անունը տալ չկամեցան անոր ծնողքը . և կուզէին որ կոչուի Սահմանադրութիւն : Ազգիս ծերերը և աւագանին հաճեցան անոնց որոշած անուանը և ամենեցուն վկայութեամբը՝ կնքեց զայն Արքազան Պատրիարքը իր դրոշմովը և բուն առաջի ամենայն ժողովրդեանն . « Սահմանադրութիւն է անուն սորա » : Ժողովուրդը՝ որուն իրը պէտք էր և հետեւաբար անտարբեր էր անուանը վրայ, սիրով և խանդաղատանօք ողջունեց իր Դշխոյն անոր տըւուած անուամբը :

Այս ազգիս վառվռուն Երիտասարդութիւնը պատկերեց զանի իր երեւակայութեանը մէջ իբրև չքնաղ կոյս մը . Արդարութեան կշիռը մէկ ձեռքը՝ Խաղաղութեան

տրտմութենէն միւսը․ խայտանքն ու գորշ հա-
կազուն դէմքը կրօնք լուսով պայծառացեալ
և լայն ճակատը հասկախառն ձիթենիով պը-
սակուած՝ որուն վերևը սև վարսերը վրայ
արծաթէ փայլմամբ կը փայլէր անմահ լուսոյ
մահիկը, 'ի նշան իր Օսմանեան հպատա-
կութեանը, քանի որ Գրութիւնք և Արուեստք
փոքրիկ սիրուն հրեշտակներու կերպարանքով
բոլորտիքը կը թռչտէին ։ Այն եռանդով որ
Երախտագիտութիւնը միայն կրնայ ազդել՝ սի-
րահարեցաւ ան Գեղեցկին՝ սուրբ սիրով, և
բարոյապէս ամուսնացաւ անոր հետ ։ Երդ-
ուաւ որ կենօք և մահու չզատուիլ անկէց․
երդում մը որ նուիրական էր՝ զոր ետ Երախ-
տագիտութիւնը առաջի ծերոց ժողովրդ-
եանն՝ յաւուր յորում օրհնեց Պատրիարքը
ազգային միութիւնս յանուն Սահմանադրութեան ։

Զգեցաւ այնուհետև Երախտագիտութիւ-
նը այն վրէժխնդրութեան ոգին որ բնական
է 'ի պաշտպանութիւն պատւոյ Գեղեցկին․
և զօրաշէն յոյսերով տարին բոլորեցաւ․ և երբ
ամուսնութեանը տարեդարձը եկաւ՝ հարսա-
նեաց տօներ կատարեց յայտ յանդիման առա-
ջի աշխարհի․ և հրաւիրեց իր դրացիներն ու
բարեկամները՝ և այն ամենքը որ կամենային
խնդալ իրեն հետ ։ Յաղթական կամարներ
կանգնեց իր Դշխոյին, երգեց զանի և նուա-
գեց․ պարեց անոր բոլորտիքը և ուրախու-



Digitized by Google

թեան գաւաթներ քանդեց ՚ի խնջոյս . և Պօս֊ֆօրի եզերքը խնդութեան աղաղակներովը թնդացուց ։

Որ խոհեմութիւն առանց կասկածի ան֊ղի տալու կարող էր այդպէս համակերպիլ զա֊նի թէ Գեղեցիկը յանչափս եռանդով սիրէ՝ բայց ուրախութիւնը արտաքուստ միայն չա֊փաւորէ . թէ երկու խոհեմութիւն միշտ մէ֊կէն աղէկ է՝ քանի որ Ջօրջը կը հնանայ կ՚ըսեն , խօլ Ըղձանքին ոչ . թէ այսպիսի հանդէս մը ծովու և ցամաքի , ազգաց և ազանց առջև գեռ կատարուելու ատենը չէ . և ազգային յարկ մը որչափ խոնարհ ալ ըլլայ՝ ազգային ուրախութեան միշտ հաւատարմագոյն վկայ կ՚ըլլայ ։ Ո՜հ , այսպիսի խոհեմութիւն մը վատութիւն կը սեպ֊վէր յաչս Երկրպագութեան ։ Ինք կ՚ըսէր ։ «Ի՛նչ որ իմս է , իմն է . առաջի Աստուծոյ ինչպէս առաջի մարդկան իմն է . Սահմանա֊դրութիւնը՝ իմ Վեհափառ Սուլթանիս և Տիրոջս շնորհիւը , իմն է . Կեցցէ Օսմանեան Պետութիւն . Սահմանադրութիւնը՝ ազգիս Օրրոցն և Հոգևոր Իշխանին համահաճու֊թեամբը , իմն է . Կեցցէ Ազգ . Կեցցէ Սրբա֊զան . և նոյն օրուան հանդէսը Նորին օրհնու֊թեամբը կնքելու կը դիմէր , և կուխնդէր , ամէն ամէն նոյնպէս կատարել ։

Ո՛վ սիրուն Երկրպագութիւն , գիտեմ որ անորժ աչքով չի նայեցար և չես նայիր

Digitized by Google

տանկալին այն ազգականացդ վրայ՝ զորս քու ջերմութեանդ հաղորդ կը համարէիր յառաջագոյն՝ բայց այն հանդիսաւոր օրը քեզի սեղանակից չեղան. և եղբայր՝ այդ և այլ պարագաներու մէջ, յորս դու բարբառեցար, անոնք խորհրդածու կերպ մը ունեցան՝ որ քեզի չոր-ութիւն թուեցաւ. լռութիւն մը՝ որ քեզի անտարբերութիւն թուեցաւ. (որոնցմէ մեկնած եմ): Սիրելիս, երիտասարդութեան չափը լեցուելէն ետքը, նման մեր բնակած գաւառին հրոյն՝ որ մակերեւոյթէն դէպ 'ի կեդրոնը ամփոփուած է, կըսեն, զգայուն մարդուն հուրը դէպ 'ի սիրտը կը կեդրոնանայ, ուր իրեն բոյնն է. բայց իր մեռնելէն առաջ ան չի մարիր: Սակայն ներէ ինծի ըսել,

Ըսէ թէ իմ կանխազգածութիւնս չի կատարուէր՝ և դու զիս ու իմ նմաններս մեղադրէիր: Բայց ես, որ սաստիկ զգալովս և անսահման վստահութեամբս քանի քանի անգամ խաբուելէս՝ կասկածը ականջ ինծի օրէնք մ'եմ ըրեր. ես, որ պզտիկուց 'ի վեր ծննդեանս, դաստիարակութեանս և պաշտօնիս բերմամբը, աշխս երկկողմանի ճիւղերուն կրօնական և քաղաքական գաղափարներուն և համակիր ու հակակիր զգացմանցը փոքր 'ի շատէ տեղեակ ըլլալու առիթ եմ ունեցեր. ես, որ ասկից տասուերկու տարի առաջ, ձեր այժմու ազնուօք վառեալ, ջերմ կուսակից եղած

Digitized by Google

եմ այնպիսի ընկերութեան մը՝ որ ազգիս պա-
տիւ կրնար բերել, զի պարզապէս ուսում-
նական և բարերարական էր, բայց և այն-
պէս իբրև անկրօնից ընկերութիւն մը դատապար-
տուեցաւ Եկեղեցապետութենէ և իբրև
ապստամբաց դաւադրութիւն մը մատնուեցաւ միայն
անուանը պատրուակաւը, թէև ազգին Մեծը, Կը-
ղերն ու Աւագանին քաջածանօթ էին, և ու-
զած իշխաններուն ստանալով՝ հաճութիւն տը-
ւած էին անոր. ես, կըսեմ, չէի կրնար այդ
դէպքերուն վրայ քեզի շատ մանրամասն և լուրջ
աչքով նայիլ։ Եթէ յիշողութիւնս զիս չի
խաբեր, Իտալիոյ վերջին անցքերը պատմելու
ատեն հայ գրով հրատարակուած Պօլսոյ լրա-
գրի հեղինակ մը (գլխու տէր մարդ մը) ըսեր
էր. «Ամէն ինչ ըսէ, թող ըսէ. Հոգւոյն մէջ մեծ
զօրութիւն մը կայ», իմա, զինուց միջոցով ան-
դամ անընկճելի զօրութիւն։

Հիմա, այսօր համոզմամբ կը հարցնեմ դար-
ձեալ մեր Կղերին՝ ճանչնալով անոր վրայ ալ
ևս Գերբնական զօրութիւնը, և յարգելու ալ միշտ
տրամադրութիւն ունենալով։ Ի՞նչ զգաց Կը-
ղերնիս Օգոստոսի երկուքին աղմկալից օրէն
'ի վեր Սահմանադրական վարչութեան խա-
փանելէն։

Գիտեմ, շատ վշտացաւ այն դառն օրուան
եղելութեանցը վրայ. բայց այդ տեսարանէն
ի՞նչ ուսաւ, և 'ի պաշտպանութիւն Ճշմարտու-

Digitized by Google

թեան ի՛նչ ըլլալ ։ Իր խղճին վկայութեանը խորհուրդ հարցո՛ւց · այդ չկրնամ · բայց սա յայտնի է որ նախ Արբաղան Պատրիարքին կուսակիցներուն կողմը դասեցաւ, ըստ մեծի մասին · յետոյ երբ ժողովուրդը աւելի պնդ տեսաւ իր սկզբանը վրայ քան զոր չէր կարծեր, ընդհանուր և մասնաւոր հրատարակութիւններով և նամակներով տուած ստորագրութիւններէն շատ մը էֆէնտիներ յետս կոչեց ։ Այս վարմունքը ոչ թէ Ճշմարտութիւն՝ այլ զօրաւորագոյն կողմ ընտրելու համար գըժտելէն ուրիշ բան չէ, ըստ երեւութին ։ Ուստի ցաւելով միշտ Երիտասարդութեան կողմանէ անոր աստիճանին մեծվայելչութեանը դէմ եղած նախատինքին՝ չեմ կարող ենթադրել որ այսօրուընէ վաղը հակառակ կարծիքով ստորագրութեան յարգը նուաստացնողը, բարոյապէս և քաղաքականապէս անբասիր կարենայ համարուիլ ։ Գիտեմ որ Երիտասարդաց վարմունքը, իբրև գայթակղեցուցիչ, յաչս քաղաքականութեան անգամ խիստ դիւրաւ չարդարանար · բայց Աշերին երկդիմի ընթացքը, բայց անոր անդամոց Հայկական վկայութիւնները, բայց մերթ այո՛ն և մերթ ոչը, մանաւանդ այնպիսի խնդրոյ մը մէջ որ կրօնական կերպարանք ունի · Գերմանական զօրութեամբ մը անգամ՝ ոչ Աստուծոյ, ոչ մարդկան, նա և ոչ իսկ իր սուկրական խղճին առջին չի կրնար արդարանալ ։

Digitized by Google

Ներկայ անցից վերջ երկարօրէն խօսիլը հարկ չէ։ Արդէն իրաւունքները և Թերութիւնները հասկցուած են. բայց ուր որ յամառութիւն տիրէ՝ համոզումը բնականապէս անկարելի կ'ըլլայ. այո՛, իրական չարիք մ'է այս, բայց անխուսափելի հետեւանք առջիններուն։ Ի հաստատութիւն բանիս կը հարցնեմ։

Եթէ Լուսաւորչական Կղերը Եկեղեցւոյ կառավարութեանը տեղեակ՝ և ժամանակին Քաղաքականութեանը քիչ մը հմուտ ըլլար, 33 տարի առաջ կրօնական գժտութիւնները այսչափ կը զօրանայի՞ն. ապօրինաւոր միջոցներով՝ կրօնական խնդրոց համար եղած քաղաքական հալածանքը տեղի կունենայի՞ր. համազգի եղբարքս՝ օտարազգի ըլլալու չափ իրարմէ կը խորշէի՞նք։ Կըսեմ, ո՛չ։

Եթէ Կղերը բաւական հմտութիւն ունենար իր պաշտօնին, բողոքականութիւնը այսչափ դիւրաւ կը տարածուէ՞ր. և առաջին բաժանումը չըլլար, երկրորդը՝ բաց ճանապարհ կունենայ՞ր։ Անշուշտ, ո՛չ։

Եթէ Կղերը իր պարտականութիւնը ճանչնար և նախ ինքը ուսեալ ըլլալով, եկեղեցական խնդրոց մէջ աշխարհականի փաղանգին դիմելու կարօտ չըլլար՝ որ երբեք արժէք չունի յայսմ մասին. և դաստիարակութիւնը բուն

Digitized by Google

Քրիստոնէական բարոյականութեան վրայ հաստատէր, և ուսմանց ազգը պերճացնէր իր աշխատասիրութեամբը. միթէ որմնափակն օրէնքի մը կարգաւորութիւն կանխեայի՞նք այժմ, իրաւ նոր բան. կամ՝ թէ ունենայինք ալ նէ՝ կարծիքներնիս այսչափ խորապէս հակառակ կուգայի՞ն. Հարկաւ ո՛չ։ Արդ, չարեաց պատճառը . . .

Սակայն Երէցը կրնայ ըսել. « Թէ այդպէս ալ ըլլար՝ ո՛ գիտէ ան տանելն ալ ինչ կըլլար »։ Ի հարկէ ժամանակը դէպքերու մայրն է. բայց ինչ որ ալ ըլլար, ո՛ Երէցդ Հայոց, եթէ բարի՝ դու 'ի քեզ Ազգը կը փառաւորէիր. և եթէ չար՝ բայց և այնպէս պարագաց կատարած կըլլայիր։

Կրնայ դարձեալ Երէցը ըսել։ « Զիս ժողովուրդը ընտրեց. թող չընտրէր եթէ անյարմար էի պաշտօնս վարելու »։ Ամէն ժողովուրդ այս ընտրական իրաւունքը առանց խիստ արգելքի գործադրե՞ր է արդեօք. բայց դիցուք թէ այդպէս ըլլայ. ժողովուրդը քեզ ընտրելու առենը՝ քեզմէ աւելի ուսեալ չէր. արդ, եթէ ինքը՝ իր նիւթական կարօտութենէ ստիպեալ՝ հարկադրեցաւ քիչ մը բան սորվիլ, դու որ 'ի ծոցն Եկեղեցւոյ այս նիւթականէն ազատ էս, ինչո՞ւ բանականիդ հոգ չէտարիր, քանի որ պարապոյ ժամանակդ ալ պակաս չէր։

Աշխարհիս մէջ ամեն բան առաւօտ է.

Digitized by Google

Թէ ժողովուրդը այս վերջի օրերուս մէջ քեզի նախատինք տուեր է, դարձեր ըլլամ, կը ցաւիմ այդպէս ըլլալուն. բայց ըսէ ինծի Կը-ղե՛րդ. Լուսաւորչական եկեղեցւոյ, յառաջագոյն դու անոր ի՞նչ փառք տուիր. միթէ անոր բարոյականութիւնը ուղղեցիր. Թուոյն և ծուլութեանը նուազելուն ախտները պակասեցուցի՞ր. Գաւառներու անկիւնը հոգեւոր մխիթարութենէ զուրկ եղբայրը սփոփեցի՞ր. ի՞նչ սերմանեցիր անոր մտացը և հոգւոյն մէջ որ քաղես: Այո՛, ծնաւ նէ մկրտեցիր, մեծցաւ նէ պսակեցիր, մեռաւ նէ թաղեցիր, Եկեղեցւոյ խորհուրդները անոր մատակարարեցիր. պաշտօնիդ այդ պարզապէս գործնական մասերուն ըսելիք չունիմ. բայց բարոյականի՞ն . . . . :

Եթէ մինչև ցայժմ կոյր կուրի առաջնորդեց և շատ անգամ խնամով եկելով թշուառ վիճակի մէջ խարխափող եղբայրք հասան երկուքն ալ, ի՞նչպէս անկից ետքը առաջնորդողին հետեւի առաջնորդեալը՝ քանի որ վերջինիս աչքը յանկարծ բացուեցաւ, և «փոխանէ անա զմորթին ու զոսկին իբրև զծառայ». իսկ առաջինը դեռ 'ի խաւարի է: Ապա եթէ ազգս քահանայն տկարանայ առաջնորդել արանց ուսելոց՝ հապա ի՞նչպէս պիտի առաջնորդէ կանանց ուսելոց: Կղե՛րդ Հայոց, ուշադրութիւն կընե՞ս. «այս միայն սկիզբն է երկանց»: Մեր աղջիկունքն ալ հիմա կուսանին. և եթէ

Digitized by Google

բարոյական առաջնորդ՝ չըլնենան, քու ան-ժամանապատուութեանդ դէմ իշխան հարուած մը խիստ հաւանական է որ անըսուժելի մնայ։

Ով Կղերդ ժողովրդեանն Հայոց. ինչ օ-գուտ շահեցէք և բորբոքեցէք. եթէ քու աշխատութիւնդ կամաւ չէ, ահա օր այցելու-թեան Տեառն 'ի վերայ քո։ Սթափէ՛ թմրու-թենէդ, և փոխանակ քու մէջդ եղող քանի մը ուսեալները 'ի զուր իբրև անհաւատ բամբա-սելը՝ նախ զանոնք քեզի ուսուցիչ կարգէ. ծն-րի՛, և ճանչցիր քու պարտականութիւն-ներդ։ Ժողովուրդը քեզմէ խորին գիտնակա-նութիւն, պերճախօս դրագիտութիւն չի պահանջեր. այդ շնորհ մ'է զոր Տէր կուտայ՝ եթէ դէպ 'ի կատարելութիւն յառաջանաս. բայց կը պահանջէ իրաւամբ որ սորվեցնես իւ-րեն Մարդկութեան և Քաղաքականութեան սկզբունքը՝ մեր Կրօնքին համաձայն. հաստա-տես անոր ոգւոյն մէջ իր Քրիստոնէական ա-զատութեան և խղճի պարտականութեան արմատը՝ որուն վրայ յենայ ամեն բարի շա-ռաւիղ անմոլար պատուաստէ. վերջապէս՝ սորվեցնես իրեն իբրև բարի Հայ ապրիլ՝ և իբրև բարի Քրիստոնեայ մեռնիլ։

Եթէ այս վերջին անգամ Նախախնամու-թեան քեզի տուած դասէն ալ օգուտ մը չի քաղես՝ ըսել է, ա՛լ «կամաւ կորանաս». և քանի որ պայթակրութիւնները ածին՝ կը մնաս դու

«նորհաւանեալ անձամբ»։ Հայրը գայթակղական Թողայ բոլոր քու հոգեւոր բարիքդ կերէ կը մրկէ, և այլ եւս «կանգնիլ ու նորէս»։

Ու ինչ կըլլայ ան ատեն Եկեղեցիս . . . ։

Ինձ չէ տրուած, Տէր իմ և Աստուած, քու խորհուրդներդ նշմարել․ բայց այս յայտնի է որ Կղերը անձամբ անձին բրած կըլլայ, և Դուն որ «կարողդ ես 'ի քարանց յարուցանել որդիս Աբրահամու», կարող ես ողորմիլ անպարտ ժողովրդեանս՝ և յարուցանել նմա «եղջիւր փրկութեան»։

# ՄԱՍՆ Բ.

## ԲԱՆ ԱՌ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխելոյ, և Սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։

Ա. Կորն. ժգ. 2։

Ներեցէք, սիրելի ընթերցողք, որ քիչ մ՚ալ խօսքս ազգային Վարչութեան և Պատրիարքութեան ուղղելով, յարգանօքս հանդերձ, (որոնք որ ալ ըլլան այժմ՝ կամ ասկից ետքը այս բարձր պաշտօնները վարողները) նկատել տամ թէ անկարելի է քակել այն բանը որ յԱստուծոյ է։

Արդ, յԱստուծոյ է Թագաւորութիւն. և ո՞ որ 'ի մէնջ ստամբակել կարէ այն իշխանութեան՝ որոյ ներքև վիճակեալ ենք։ Յաստուածոյ է Եկեղեցի մեր և Ազգութիւն. և ո՞ որ 'ի մէնջ կամաւ թշնամի է արդեօք Եկեղեցւոյ և Ազգութեան։ Յաստուածոյ է Պատրիարքութիւն. և ո՞ որ 'ի մէնջ համարձակեցաւ մինչեւ վերջին անգամ՝ անոր չի հնազանդիլ, անոր հրամանն ու կնիքը չի պատուել։ Իսկ եթէ ժողովուրդս սիրով հպատակ է Թագաւորին, հաւատարիմ՝ Եկեղեցին և Ազգութեանը, և հը-

Digitized by Google

նպաստող՝ օրինաւոր Հրամանաց Պատրիարքին , Ի՞նչ մեծ կարեւորութիւն կրնայ ունենալ այս ինչ կամ՝ այն ինչ անձին Երուսաղէմայ Պատրիարք ըլլալ կամ չըլլալը . քանի մը մասնաւոր անձանց օրագիրներու խմբագրաց դէմ ունեցած կիրքը , որ ազգին նշանաւոր մէկ մասը իբրեւ անհաւատ բամբասուի եւ իբրեւ ապըստամբ նշաւակի : Ի՞նչ հարկ կար առանին մարդ յարուցանել պարզ վիճաբանական խնդրոց մէջ , եւ առ 'ի չգոյէ զինուց՝ մեր տիրոջը սուինները մեր եղբարց կուրծքերուն դէմ ուղղելու հնարել :

Ո՞ր չար ոգին կը թելադրէ զմեզ երկար շրջաններ ընել՝ եւ դառնալ առ քաղցի վրէժխնդրութեան մեր « անջին կէսը [illegible]ել » : Ու ինչ կըսեմ կէսը . ահա ազգային մարմնոյն ամենէն մէկը գուցէ հազիւ թ'է մնացեր . եւ քաղաքակրթութեան դուռը բացուելէն մինչեւ ցայսօր՝ քանի որ ազգք եւ ազինք աճեր զօրացեր են՝ մեր այդ մնացորդն ալ յերկու է խրամատեր . թող ստորաբաժանումները :

Բայց ինչ որ ալ ըլլայ մեր կացութիւնը՝ ժամանակը մեր կամացը կամ դիւրութեանն համար յետս ընկրկելու ճգնիլը՝ յիմարութիւն է, խթանի դէմ աքացել է , Աստուծոյ դէմ մարտնչիլ է : Ժամանակը կապրի . ով որ [illegible] [illegible] պէտք է անոր հետ ապրի : Ու ինչ է բուն տիրող վէճը եթէ ոչ մաքառումն ընդ-

դէմ ժամանակիս՝ որուն ծնունդն է Սահմանադրութիւնը ։

Մեր մարդկային խորհուրդ թերութեամբ զգածեալ է և կատարելագործութեան ենթակայ ։ Մարդկային հանճարը անխափականութենէն այնչափ սոսկ է որ երբէք անոր չի պիտի ժամանէ , աստիճան մը կատարելութեան հասնիլը միայն փորձառութեանն արդիւնք կրնայ ըլլալ ․ այս նոր կանոնադրութիւնս ալ նոյն ընթացքին մէջ էր ․ որովհետև վերաքննելի էր ։ Իր ազդեցութիւն պարզապէս բարոյական էր , և իր անունը համար պատճառած գայթակղութեանն իսկ հակառակ՝ այնչափ ազդու ներգործեց ժողովրդեան վրայ , որ չորս հարիւր տարիէ 'ի վեր բուռն զօրութեամբ իսկ գործադրուող դրութեան ազդեցութիւնը անկանգնելի կերպով կործանեց ։

Ի՞նչ էր ժողովուրդը անցեալին մէջ, խուժան բթամիտներու խումբ մը , զոր խիստ դիւրին էր իբրև աչքը գոց ջոկեր մը վարել․ և նիւթականով միայն գոհացնել, կամ նիւթականով գրգռել․ ինչպէս որ կը պահանջէր կառավարողաց փառասիրութիւնը կամ շահը ։ Ուստի ահա այն դառն աղէտք՝ որոնց ժողովուրդը անպայմանապէս հանդիսատես եղեր է և գործադիր անգամ․ և որոնց վրայ այսօր Կղերը ամօթապարտ է և մեր թախծեալ ։

Այժմ ժողովուրդը կուզէ հաւատք՝ ա-

ռանց գժտութեան. Զգուշութիւն՝ առանց խարութեան. Դաստիարակութիւն՝ առանց մոլեռանդութեան. այս է իրեն նպատակը. բայց որովհետեւ դեռ ժամանակն եղած է գը-վելի նպատակին հասնելու համար գործածած միջոցները թերութենէ ազատ չեն: Այս արդամադրութեան մէջ գթիլը՝ իրեն համար կըրծանիլ չէ, այլ քալելու վարժութիւն միայն մինչեւ բարձքը ու սրունքը հաստատուին:

Հաւատք. Եղբօրութիւն եւ Ազատութիւն. ոչ այլ ինչ է բայց Ճշմարտութիւն: Ճշմարտութիւն՝ որ բանտի մէջ չի զայրանիր, աքսորի մէջ չի վհատիր, հողի տակ անգամ չի մեռնիր. Ճշմարտութիւն՝ լոյս իրաւանց. որուն կանթեղը սիրտն է, իւղը իմաստութիւն, եւ վառումը խիղճ մտաց: Դրէ՛ք այդ կանթեղը ձեր մտաց առջին, Տեարք իմ, եւ քանի որ անոր յետնեալ ծառան խօսի ձեզ՝ հեռացեալ բաղդատեցէ՛ք անոր բառերը այդ Օծման լուսոյն վճռական պատգամներուն հետ:

Հարկ էր որ Հայ ազգս օրէնք մը ունենայ յառաջութիւն կրօնական եւ ազգային շահուց, եւ ի նպաստ բարոյականութեան՝ թէ ոչ, կըսեմ, Այո. հարկ էր որ ունենայ:

Այս օրէնքը գործադրելի ըլլալու համար հարկ էր որ Կղերին Աւագանւոյն եւ Ժողովրդեան ականաւորաց համահաւանութեամբն ըլլայ թէ ոչ: Կըսեմ՝ Այո՛ հարկ էր այդպէս ըլլայ:

Digitized by Google

Հարկ էր որ այս օրէնքը մեր պիտոյիցը համապատասխանելու համար կատարելագործելի մասունքը որոշեալ ատենին վերաքննութեան ենթակայ ըլլան, թէ ոչ. կըսեմ, Այո՛ հարկ էր որ այդպէս ըլլայ։

Ժողովրդեան պայմանքն էր թէ ոչ այսպիսի օրէնքի մը հպատակիլ՝ որուն Ճակատը Արքազան Պատրիարքին կնիքը կը կենար ՚ի վաւերացութիւն. և չներել որ մէկը (ով որ ըլլայ նէ ըլլայ) ուղղակի կամ անուղղակի զանի շեղել կամ այլայլել համարձակի՝ ըստ իւր կամաց կամ քմաց. կըսեմ, Այո՛ պարտքն էր որ այդպէս ընէ։

Արդ՝ եթէ հարկ էր որ օրէնք մը ըլլայ, եթէ հարկ էր որ այդ օրէնքը ընդհանուր հաւանութեամբ ըլլայ, եթէ հարկ էր որ վերաքննելի ըլլայ, եթէ պարտք էր ժողովրդեան որ անոր հաւատարիմ ըլլայ. ապա ի՞նչու այսչափ տարաձայնութիւնք անոր աղագաւ. Օրէնքս ի՞նչ առիթ կրնար տալ դայթակղութեան. և ո՛չ մի։ Պիտի ըսեն ոմանք, "օրէնքը աղէկ էր բայց անոնք ո՛չ"։ Այս, ըստ իմ՝ պատրուակ մի է. որուն առաջքը [illegible] կրնար առնուիլ ՚ի սկզբանն, և որուն տակ յետոյ քաւութիւնը կրցաւ պատսպարիլ։ Գիտցուք թէ այս ըլլար յայտնի թերութիւնը. բայց և այնպէս վերաքննութիւնը հոն էր. և զի՞նչ արգելոյր [illegible] ատե-

նին քննութեան տակ ձգել այս խնդիրը․ և միթէ ժողովուրդը, որ օրինապահութենէ զատ պարտականութիւն չունի, կրընա՞յ արդեօք ինքնին անոր այլ անուն տալ քան զայն՝ որով անուանեց զանի ազգային ժողովը և յոր կնքեց զանի Սրբազան Պատրիարքը։ «Ես մեղս ինչ ոչ գտանեմ՝ ՚ի վերայ ժողովրդեանն » Սահմանադրական » կոչելուն համար իրենք զիրենք, և կը զարմանամ թէ ինչպէս կարելի է այս անուան ապստամբի անհաւատի գաղափարներ կցել. (Թէպէտ չխոստա-կը զրուցելու համար պզտիկ անունով մեծ գործ գործել, լաւ է, նախապատիւ է քան թէ մեծ անունով պզտիկ գործ)։

Գիտեմ, որ կառավարութիւնը բիւր խոչընդոտներ ունի. և շատ անգամ կստիպի դատաւորը դատին քիչ մը տարբեր գոյն տալ քան զընականը. բայց այս ալ չափ մը ունի. Ճերմակին սև ըսելը՝ օրինապահը անօրէն անուանելը՝ հարկաւ դուրս է այս բուան արտօնութեան սահմանէն։ Ես այնչափին ալ չեմ ներեր (գուցէ քաղաքականութիւն չգիտնալուս համար). բայց երբ խնդիրը եկեղեցական կերպարանք մը ունենայ, երբ վճիռը Աստուծոյ քահանայի մը բերնէն ելլէ, ան ատեն կրօնքն է, և քաջ գիտեմ որ «այո՛ն պէտք է այո՛ ըլլայ. և ո՛չը, ո՛չ. և աւելին քան զայն ՚ի չարէն է »։

Digitized by Google

Անշուշտ, շատ աւելի աղէկ կըլլար այս խնդիրը այսչափ չի յուզել՝ և եթէ յուզուե-ցաւ՝ գոնէ եկեղեցականաց տարաձայն եղած կէտին վրայ երեսփոխանութեան քուէն չի պահանջել. անշուշտ շատ աւելի աղէկ կըլլար վերջէն ըլլալիք զիջումը, որ չընդունուե-ցաւ իսկ, յառաջագոյն ընել. քան թէ Երես-փոխանութեան պատիւը վտանգի մէջ ձգել՝ որուն վրայ կեցած է օրինաց հաստատու-թիւնը։ Ո՛հ, ո՛չ ապաքէն ազգային օգտաշատը երեք ամսէ 'ի վեր մրրիկ կըտապատնայ՝ և մեր նորաշէն տունը շանթահարել չուներ։ Ո՞չ ա-պաքէն այսպիսի ծանրակշիռ պարագայի մէջ Իմաստութիւնը պէտք էր կասկածի դնէ, որ ապահովութեան մայրն է։ Յայտնի է սակայն թէ Վարչութիւնը կասկածի տեղի ևս ունէր ալ նէ՝ Պատրիարքական արժանաւորութիւնը, որ մինչև այն կէտը օրինաց պատիւ էր բերեր իր պաշտպանութեամբը՝ չի համարձակեցաւ կասկածի զոհ ընել։

Խնդիրը եթէ անձնական ըլլար՝ այս ետքի վարմունքը վեհանձնութիւն էր. բայց այսօր ցուցելով միայն կրնամ նայիլ անոր վրայ՝ քանի որ ժողովուրդը այո՛ և ո՛չ ի համար արդ իսկ հերձեալ է, որ հոգեւորականաց հակառական և փոփոխ վճիռն է։

Դառն անցք, յոյժ դառն. ինչու արդեօք, Տէր Աստուած, այն ազգը՝ որ Քու օրհնութիւնդ


Digitized by Google

տարածելու համար Հայ ժողովրդեանս դըս-խուն վերևը տարածուած է, այսօր անով ան-միաբանութեան անէծքը կը տարածի . . . :

Անիծից շանթերը ազխոութեան մարախ-ըապատ ամպերէն տարրանալով, արքայից գա-հոյքը տապալեցին երբեմն : Այս պատմական ճշմարտութիւն մ'է : Միթէ այս ամպերը Հայաստանին վրայէն փարատեա՞լ են :

Բայց եղածը եղաւ . և մեծ դաս մը եղա-անոնց որ զանձինս յոյժ առ իմաստունս ու-նին . գոնէ փորձով հասկցան անոնք որ իրենց պանծացեալ Քաղաքականութիւնը հակառակ Կը-ղերին ախոյեան դեռ չեն կրնար հանդիսանալ . վասն զի որչափ տգէտ ալ կարծուին, մրջիւն մը կայ որուն մէջ ինք միայն իմաստուն է , և յու-րում իրեն կարողութեան որոշ սահման մը դնել դեռ կարելի չէ եղած քաղաքակրթեալ Եւրոպայի մէջ անգամ :

Արդ . Տեարք իմ, այս ևս յայտնի է որ ազ-գութեան սկզբամբ կրօնքը պահպանողները այնչափ կը տկարանան , արևելքի մէջ , ազգու-թեան բուն շահերը ճանչնալու , որչափ կրօն-քի սկզբամբ ազգութիւնը պահողները կը տկարանան կրօնքի էական շահերը ճանչնալու : Այս ամենանուրբ խնդրոյն հետ ներքին և կից վերաբերութիւն մը ունին այն գաղա-փարները որով խ——րեալ ըուածները ը————րեալ անուանեալներէն կը խորշին : Այս գայթ'ի

գայթ սկզբունքները ահա ոչ միայն մեր ազգային շահուցը փնտռեցին այսօր, հապա յայտնապէս կրօնական շահուց ալ գալան. Թէպէտ այս վերջի հարուածը ուսմիկն ուղղակի չի վերգուեր՝ առ փողափոխականութեան ժամանակիս, բայց դանդաղ ազդեցութիւնը ժամանակէ մը ետքը աւելի զգալի պիտի ըլլայ. այս անպատեհ դրութեան հետեւանքներէն մէկն է վերջի օրերս հրապարակուած Հայաստանեայց եկեղեցւոյ Սահմանադրական կամ Միապետական ըլլալուն վարդապետութիւնները, զորս Հոգեւոր ժողովը հաստատապէս հերքեց, իբրեւ մոլար դրութիւններ. բայց քանի որ անոնց կողմնակի ազդեցութիւնը բառնալու համար իր յատուկ դրութեան որն ըլլալը չյայտնեց (ինչպէս պարտքն էր ընել), խնդիրը միշտ առկախ եւ անորոշ մնացած կը համարուի յաչս խորհրդածողաց. եւ միշտ կրօնական հակառակ կուսակցութիւններն ունի՝ պարզապէս ազգային գաղափարաց հակասականութեանը մէջ:

Այն ազգաւեր փոփոխումը որ 33 տարի առաջ պատահեցաւ՝ Եկեղեցւոյ Միապետական ըլլալ կամ չըլլալէն մեծագոյն առիթ մը կարծեմ, չէր ունեցեր:

Կը հարցնեմ, եթէ Եկեղեցին Սահմանադրական չէ, Միապետական ալ չէ, հապա ի՞նչ է: Գիտնալու շատ կարեւոր բան. Ինծէ թէ Կղերը այս խնդրոյն վրայ դանէ չի թմրէր:

Digitized by Google

գայթ սկզբունքները ահա ոչ միայն մեր ազգային շահուցը փնտռեցին այսօր, հապա յայտնապէս կրօնական շահուց ալ դպան. Թէպէտ այս վերջի հարուածը ռամիկն ուղղակի չի վըրդովեր՝ առ փոփոխականութեան ժամանակս, բայց դանդաղ ազգեցութիւնը ժամանակէ մը ետքը աւելի զգալի պիտի ըլլայ. այս անպատեհ դրութեան հետեւանքներէն մէկն է վերջի օրերս հրատարակուած Հայաստանեայց եկեղեցւոյ Սահմանադրական կամ Միապետական ըլլալուն վարդապետութիւնները, զորս Հոգեւոր ժողովը հաւասարապէս հերքեց, իբրեւ մոլար դրութիւններ. բայց քանի որ անոնց կողմնակի ազգեցութիւնը բառնալու համար իր յատուկ դրութեան որն ըլլալը չի յայտնեց (ինչպէս պարտքն էր ընել), խնդիրը միշտ առկախ և անորոշ մնացած կը համարուի յաչս խորհրդածողաց. և միշտ կրօնական հակառակ կուսակցութիւններն ունի՝ պարզապէս ազգային գաղափարաց հակասականութեանը մէջ։

Ե՞ն ազգաւեր փորձովը մը որ 33 տարի առաջ պատահեցաւ Եկեղեցւոյ Միապետական ըլլալ կամ չըլլալէն մեծագոյն առիթ մը կարծեմ, չէր ունեցեր։

Կը հարցնեմ, եթէ Եկեղեցին Սահմանադրական չէ, Միապետական ալ չէ, հապա ի՞նչ է։ Գիտնալու շատ կարեւոր բան. Կ՚ըսէ թէ Կլերը այն խնդրոյն վրայ դոնէ չի թմրեր։

Digitized by Google

Արդ, մեր դրութեանը վերադառնալով՝ ինչ որ ալ ըլլան այս անցքերը, նշանք միայն են ժամանակիս՝ որ ազգային մարմնոյս ծանր հիւանդութիւնը կարտայայտեն։ Ճարտար բըժիշկ մը նշանները հիւանդութեան հետ չի շփոթեր. զանոնք միայն խափանելու համար եղած դեղերը հարեւանցի են և երբեք առողջացուցիչ ոչ, այլ մանաւանդ աւելի պարացուցիչ՝ ժամանակէ մը ետքը. զուցէ դըժուարաբուժելի խօթութիւն մը անապան դարմանով՝ անբուժելի ըլլայ։

Մեր կրօնացեալ ազգութեան բժշկութեան համար Դարմանագրի մը հարկը՝ անժխտելի է. և այս ոչ այլ ինչ կրնայ ըլլալ՝ բայց օրէնք միայն։ Օրէնք մը՝ որ ազգութեան սկզբունքը կրօնականէն որոշէ՝ առանց երկուքին ալ շահուցը վնասելու։ և դաստիարակութիւնը կրօնագիտութեամբ հանդերձ ընդհանրայնէ, բարոյական սկզբամբ միայն՝ առանց կրօնական սկզբանց համար եղբարց մէջ ոխ սածելու, որ թէ Աւետարանի և թէ Քաղաքակրթութեան հակառակ է։

Հայը այսօր բաւական համոզեալ է թէ, ոչ զգեստափոխութիւն, ոչ լեզուափոխութիւն, ոչ գաղափարափոխութիւն և ոչ ալ կրօնափոխութիւն՝ զինքը իր ազգութենէն չեն կրնար մեկուսացնել կամ զրկել։

Digitized by Google

Հայր անկից վերջը ալ կամք չունի յուրգանդէ Հայ եղբօրը խղճին վրայ բռնանալու, և իրեն աշխարհիկ եղբօրմէն այսպիսի հաշիւմը պահանջելու՝ որ իւրաքանչիւր ոք Աստուծոյ միայնոյ կը պարտաւորի տալ՝ զոր ամեննուս ալ պարտքն է սիրել եղբայրսիրութեան մէջ ։ Այս սուրբ ազատութեան վրայ հաստատեալ օրէնքը միայն կարող է ապօրինաւորութեան և իշխանութեան զեղծմամբ կիրառութեան մինչև ցարդ գործած վնասներուն առաջքն առնուլ, և անոնց տխուր ազդեցութիւնը նուազեցնել ։ Այսպիսի օրէնք մը իւրաքանչիւր անհատի հարկաւ առ Աստուած առ ընկերն և առ անձն ունեցած պարտականութեան Սահմանը իրեն հիմնական դրութիւն պէտք է ունենայ . և ահա այս ուղիղ քաղաքական ըմբռնմամբ՝ ինչ որ ալ ըլլայ օրինացրս անունը՝ միշտ Սահմանադրութիւն մի է, իբրև համանիշ օրէնսդրութեան ։

Համազգի եղբարց մէջէն ամեն ողջամիտ անձինք կզգան այսպիսի օրինաց կարեւորութիւնը, (ներկայ ժամանակիս կարեացը համաձայն, և Բարձրագոյն Դռնէն շնորհուած արտօնութեան սահմանին մէջ) որ գեռ և ոչ մէկ Հայ հաստատութեան մէջ չէ գործադրուիր ։ Փափաքելի է յոյժ որ այս օրէնքը նախ մեր կողմէ հաստատութիւն գտնէ, քանի որ թուոյ առաւելութեամբ ընդհանուր ազգութեան մեծա-

Digitized by Google

գոյն մասը դեռ ներկայացնելու իրաւունք, և ներողամտութեան վրայ հիմնեալ արմատական Կրօնք մը ունինք. Թէպէտ ազգային ծառիս որ Մի–ջէն ու որ Ծնանի՝ իբրև ազգային ծառի պտուղ՝ հասարակութեան համակրութիւնը կրնայ գրաւել, մինչ այն եղանակաւ՝ որով ընդհատեալ Սահմանադրութիւնը գրաւեց մեզմէ թուով սոտր ազգայնոց վարկը:

Հարք իմ և եղբարք, Մեր և Աստուած համանիշ են. յիշեցէք որ Մերը, Նեստորական հաւատոյ անուամբ, մինչև երեք հարիւր տարի հալածուեցաւ և գետնի տակ ապրեցաւ. և այս զէնքով միայն իր բռնաւորներուն յաղթեց, անոնց գանձերը գրաւեց, և անոնց թագաւորդ գլուխները մինչև ՚ի հող խոնարհեցուց իրեն ոտքը առջին՝ Քրիստոնէութեան յաղթանակին: Մերը, անհաստատութեան անուամբ դարձեալ հալածեցաւ գրեթէ նոյնչափ ժամանակ անոնցմէ՝ որ անուամբ անոր պաշտօնեայ ներն էին. բանտարկուեցաւ զնդաններու մէջ, հաւատաքննութեան ատեաններու մատնուեցաւ, փայտակուտի խարոյկներու մէջ նետուեցաւ, մինչև հրով և սրով սրբեռով եղաւ իր մերժուերէն, և Նուրացից անկեց՝ Քաղաքակրթութեան յաղթանակաւ: Իրաւ է որ մեր մէջն ալ Մերը բազումս խոշտանգեցաւ և բազմադիմի եղանակաւ հալածուեցաւ, մանաւանդ սա վերջին երեսուն ու երեք տարիներու մէջ, բայց քանի

որ զանի մեր սրտին մէջ ունինք , յուսալի է որ փրկութեան ամսոյ մինչև քառասնորդը որոյ- ծառապաշտիս յառնէ՝ Աւգոստինեան անուամբ :

Եթէ « ամենայն տուն որ յանձն իւր բաժանի ոչ կարէ կալ հաստատուն » այսպ մեր բաժանմունքը կորուստնիս կը փութացնէ : Ոչ ապաքէն այլ և այլ դաւանութենէ հայքս՝ զատ զատ դասակիցններ բռնած ենք այս խարխուլ- տանը մէջ որ միայն միրով կրնայ բարգաւաճես- նորոգուիլ : Արևելեան տանս հիմը հայ անուան վրայ է և նոյն անուամբ սանդուխը ազատ՝ ալին կենանք այն սկզբունքին վրայ զոր մեր խնդիրը մեզի կազդէ , այսինքն Սիրոյ և Միութեան . փակինք ողջով այն սկզբունքին որ դասիս մեզի կազդէ , այսինքն Ազատութեան և Եղբայրութեան : Ոչ ապաքէն մեր հաստատութեանն հիմն է « տալ զԿայսերն Կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ » . նուիրենք մեր սէրը՝ Ազգին , մեր հնազանդութիւնը՝ Թագաւորին և մեր սիրտը Աստուծոյ . և փոխանակ ըլլանք որ այցելութեան օրը հեռու չէ :

Որքան՝ Տէր , նեղեմ որ խօսքս քեզի դարձընելով՝ լմնցնեմ : « Մի խնդիր կը խնդրեմ ՚ի Տեառնէ որ ելնէ ՚ի նմանէ եւ ըլլամ ես տագիս մէջ » , բայց և այնպէս այս օրհնաբանեան փառքը մեր Պատրիարքութիւնը ստանալ կարե-

խաւ , յօդուած Եկեղեցւոյս ։ Ձեր Սրբազնու-
թիւնը՝ ներկայ անցից մէջ լաւ պէտք է վե-
րահասու եղած ըլլայ՝ թէ ինչպիսի ազդեցու-
թիւն ըրած է քաղաքակրթութիւնը ընդհա-
նուր ազգին վրայ ։ Ցաւր մի է այս որ միշտ
պխոխ վազէ ․ Ձեր Սրբազնութեան գործն է
անոր այնպիսի ուղղութիւն մը տալ՝ որ Կրօն-
քի և Բարոյականութեան սերմերը առողջանէ ։
Ուղղին քար դնելը՝ չազդեր խմիք ․ շատ աջելով
վրայէն կանցնի ․ ինչպէս յայտնի լուկ է ․ բոլո-
րովին պտոտ քաշելը՝ ժամանակ մը միայն անոր
ընթացքը կարէլ է , մինչև բարձրանայ և
վրայէն վար թափալի , և փոխանակ առողջանա-
լու՝ դաշտերը ապականէ ․ գուցէ և պարիսպն
ալ կործանէ ։ « Խմոր մի է այս , Սրբազան Տէր ,
որ զամենայն զանգուածն խմորէ » ․ Ձեր Սրբ-
բազնութեան գործն է , ափէն չանցուցած հաց
ընել զայն յարմար ազգը սնուցանելու և կազ-
դուրելու ․ գուցէ քիչ մ'ալ որ անցնի ալ չա-
փէն աւելի թթուելով՝ պօռթկայ և անպի-
տանանայ ։ « Աղ մի է , զոր անհամեցնելու չէ » ․
լոյս մը , որ գրուանի տակ պահելու չէ » ։ Կը-
րօնքի և Ճշմարտութեան « պատուական մար-
գարիտն է այս » ․ որ և է շահու կամ փառա-
սիրութեան կիրքերը խնայելու չէ այլ « վա-
ճառելու է զանի գնելու համար » ։

Սրբազան Տէր , եթէ Մարդկութիւնս ան-
դրկում ըլլար՝ փորձառութեան կարօտ չէր ըլ-

Digitized by Google

լար. և զի՛նչ է փորձառութիւն եթէ ոչ սը-
խալէն օգտիլ:

Ճշմարտութիւնը՝ հաստատութեան մէջ մի է. Հայր, և դու Քահանայապետ որ Խաչ 'ի ձեռին այդ վէմին վրայ կանգուն կեցած ես. բոլոր մարդկային կիրքերը՝ որոնց. յուզիչն է փառասիրութիւն և մամոնայ, իբրև բուռն ալիք այդ վէմին կը զարնուին՝ միայն խորտակելու համար, քանի որ մեր Փրկութեան Նշանը դու իշխանապար անոնց վրայ բռնած ես: Իսկ եթէ երբեք այդ կրից մեծութիւն զքեզ շուարացնէ և ալիքն սկսին քեզ իշխել (ինչպէս իշխեցին շատ սրբոց և Աստուծոյ ընտրելոց վրայ անգամ) սակ մարդկային տկարութեան արդիւնքն է այդ. պէտք չէ յուսահատիլ, այլ ըսել "Օգնեա ինձ, Տէր զի կորնչիմ աւասիկ":

Քեզ մնկ է, Սրբազան Տէր, յառաջ քան զայլոց, իբրև Քահանայապետ՝ հսկել Եկեղեցւոյ շահուցը, իբրև Դատաւոր՝ պաշտպանել արդարութիւնը. իբրև Հայր՝ գործով քարոզել ներողամտութեան օրէնքը:

Հուսկ յետոյ, Սրբազան Տէր, ամեն բարոյականութեան և քաղաքակրթութեան սերմ՝ Յաւետարանէ անտի է. պէտք է որ Կղերը ուսանի:

Ամեն չարիք՝ տգիտութենէ առաջ կու գան. պէտք է որ Ժողովուրդը ուսանի:

Digitized by Google

Ընկերակցութեան օրէնքը Քրիստոնէութեան հիմն է․ պէտք է որ այս օրէնքը պաշտուի։

Ու արդ, Աբրահամեան Հայր, դու, իբրև գլուխ ազգիս, որչափ փառաւորութիւն՝ ազգն ալ քեզմով կը փառաւորուի։ Ո՞րն է քու փառքդ․ ազատ ժողովուրդ մը սնանե՞լ, թէ քաղաքակրթեալ․ քեզ կը թողում ընտրել. և ես, խօսքս կնքելու համար՝ կըսեմ յանուն Ճշմարտութեան,

Ազատումը, Աբրահամեան Հայր, միակ մկրտութիւնն է, և դու Քահանայ․ հեղ զայն 'ի գլուխ ժողովրդեանդ՝ որպէս զի ըլլայ ՄԱՐԴ։

Յ. ՈՍԿԱՆ

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google



Գին 5 ղուրուշ։

Հեղինակը՝ գործս շարունակելու համար Արգոյ Հասարակութեան կողմանէ քաջալե-րութեան կըսպասէ՝։